Բովանդակություն

Ներածություն 2

Գլուխ 1. Օրենքների, որոշումների ու կարգավիճակների «պատերազմներ» 5

Գլուխ 2. Էթնիկ մոբիլիզացիան և բռնությունների սկզբնավորումը ղարաբաղյան կոնֆլիկտի ժամանակ (1988 թ.) 14

2.1. Մուտք 14

2.2. Հակամարտության էթնիկացումը 16

2.3. 1988, նոյեմբեր 27

Գլուխ 3. Ազգային, հասարակական ինքնակազմակերպման մեխանիզմները ԼՂԻՄ-ում՝ որպես քաղաքացիական դիմադրություն 32

Գլուխ 4. Ռազմատենչական/սովետաադրբեջանական վարչակարգը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում 44

Գլուխ 5. ԼՂՀ և անկախության հռչակում 53

Եզրակացություն 62

Օգտագործված գրականության ցանկ 65

ԱՐՄԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

«ՄԻԱՑՈՒՄԻՑ՝ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ.

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ»

Ներածություն

1988թ. սկիզբ առած ղարաբաղյան շարժման ակունքները գալիս էին դեռևս խորհրդային 70-ամյա շրջանից, երբ այս կամ այն կերպ կուսակցական կամ հասարակական խողովակներով Մոսկվայի առջև բարձրացվում էր ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ հետ միավորելու խնդիրը: Այս խնդրի առաջադրումը կապված էր ոչ միայն պատմական արդարության վերականգման պահանջի հետ, այլև, հատկապես 1950-60-ական թթ. սկսած, ԼՂ հայերի՝ էթնոմշակութային ինքնության զարգացումների վտանգվածության և դրա հետևանքով ԼՂԻՄ ժողովրդագրական պատկերի փոփոխությունների հետ, ինչը սպառնում էր երկրամասի՝ պատմականորեն ձևավորված էթնիկական ու մշակութային դիմագծին: Նման վտանգվածության կամ սպառնալիքի ընկալման համար հիմք էր ծառայում նաև Ադրբեջանի կազմում գտնվող մեկ այլ ինքնավարության՝ Նախիջևանի ճակատագիրը, որն, ըստ էության, զրկվեց հայկական դիմագծից:

Գորբաչովյան վերկառուցման ու հռչակված հրապարակայնության քաղաքականության շրջանակում հնարավորություն ընձեռվեց խնդիրը կրկին առաջ քաշելու համար, և 1987թ. այդ նպատակով Մոսկվա ուղղված կոլեկտիվ նամակների, տարբեր ձևաչափերով՝ մտավորականների, կուսակցական, հանրային գործիչների և այլ հանդիպումներով, սկսված գործընթացը 1988թ. փետրվարին դարձավ հրապարակային՝ զուգորդվելով փետրվարի 20-ին ԼՂԻՄ

Մարզային խորհրդի ընդունած որոշման հետ, որով ԼՂԻՄ-ը, հիմնվելով ազգերի ինքնորոշման իրավունքի վրա, որոշում ընդունեց դուրս գալու Ադրբ. ԽՍՀ կազմից ու միանալու ՀԽՍՀ-ին՝ դիմելով երկու հանրապետությունների ԳԽ-ներին՝ դրականորեն լուծելու այս խնդիրը: Սկզբնավորվեց ղարաբաղյան շարժումը, որն իր զարգացման ու շարունակականության ընթացքում դեռևս խորհրդային շրջանում դինամիկ ու բարդ տարբեր դրսևորումներ ունեցավ՝ քաղաքականից էթնիկ հակամարտություն, հանրային քաղաքացիական աննախադեպ ակտիվություն և էթնիկ մասսայական բռնություններ, «օրենքների ու կարգավիճակների պատերազմներ» և այլն, սակայն ինքնորոշման իրավունքը՝ որպես շարժման լեգիտիմության անկյունաքար, մնաց անփոփոխ: Ինքնորոշման պահանջն ու գաղափարը հնարավորություն տվեցին, որ այն ընդլայնվի ու դառնա դեմոկրատական ու մարդու իրավունքների համար պայքարի շարժում՝ ըստ այդմ էլ հանրային աջակացություն ստանալավ ոչ միայն արևմտյան, այլ ԽՍՀՄ այլ ժողովրդավարական շարժումներից, գործիչներից:

Ըստ էության, ղարաբաղյան շարժումը պետականաստեղծ դերակատարում ունեցավ՝ դառնալով ոչ միայն ԼՂՀ, այլև ՀՀ ձևավորման անկյունաքարը: Երրորդ հանրապետությունը ձևավորվեց հենց ղարաբաղյան շարժման հիման վրա:

Այս հետազոտությունում անդրադառնում ենք դեռևս խորհդային շրջանում՝ 1988-1991 թթ., այսպես կոչված, «օրենքների ու կարգավիճակների պատերազմներին», ԼՂԻՄ, ՀԽՍՀ, Ադրբ. ԽՍՀ և մոսկովյան՝ դրանց վերաբերող որոշումներին, այդ որոշումներին նախորդող ու հաջորդող մասսայական շարժումներին ու բռնություններին:

Ըստ այդմ էլ ուսումնասիրության նպատակն է վերլուծել ԼՂԻՄ վարչաքաղաքական պատկանելիության ու կարգավիճակային փոփոխությունները 1988-91 թթ. և դրանք պայմանավորող բազամաշերտ գործոնները, թե ինչպես էր հակամարտությունը «հաղթահարում» այդ փոփոխությունները, որոնք էլ, իրենց

հերթին, հակամարտության նոր փուլ էին դառնում։ Ըստ այդմ էլ պաշտոնական-քաղաքական այդ փոփոխությունները քննարկվում են հակամարտության փոխակերպումների լույսի ներքո՝ որպես հակամարտային ընթացքի հանգույցներ, որտեղ հատվում են պաշտոնականը՝ Երևան, Բաքու, Մոսկվա, Ստեփանակերտ, և հասարակական, քաղաքացիական, ազգային զանգվածային շարժումները՝ հանրային ակտիվությունից մինչև էթնիկ բռնություններ։

Դիտարկվում են հետևյալ խնդիրները.

1. Ղարաբաղյան շարժման սկզբնավորումը. 1988թ. մասսայական շարժումներ ու էթնիկ բռնություններ։
2. «Օրենքների ու կարգավիճակների պատերազմներ». ԼՂԻՄ, ՀԽՍՀ, ԱԽՍՀ, Մոսկվա։
3. Ազգային, հասարակական ինքնակազմակերպման մեխանիզմները ԼՂ-ում՝ որպես քաղաքացիական դիմադրություն։
4. Ռազմառստիկանական/սովետաադրբեջանական վարչակարգը ԼՂ ում։
5. ԽՍՀՄ փլուզումը և հանրապետության հռչակումը. ինքնորոշման իրավունքի գործնական իրացումը։

Գլուխ 1.

Օրենքների, որոշումների ու կարգավիճակների «պատերազմներ»

Ղարաբաղյան հակամարտության զարգացումների կարևոր փուլերից են միութենական, հանրապետական, մարզային մակարդակներում տարբեր մարմինների ընդունած որոշումները, երբ դեռևս խորհդային իրականության պայմաններում հակամարտ կողմերը՝ ՀԽՍՀ-ը, ԼՂԻՄ-ը, Ադրբ. ԽՍՀ-ը և կենտրոնական իշխանությունները տարբեր, այդ թվում՝ իրար հակասող, որոշումներ էին ընդունում ղարաբաղյան խնդրի վերաբերյալ: Դրանք կարելի է բնութագրել որպես, այսպես կոչված, օրենքների, որոշումների, կարգավիճակների «պատերազմներ», երբ ընդունված որոշումները չէին բավարարում կողմերից մեկին՝ հանգեցնելով նոր որոշումների ընդունմանը, հնի չեղարկմանը և այլն: Հակամարտային այդ որոշումների ընդունման ու քննարկումների վայր էին հիմնականում ԽՍՀՄ ԳԽ-ը, Նախագահությունը, ԽՄԿԿ Քաղբյուրը, ԽՍՀՄ կառավարությունը, ՀԽՍՀ ԳԽ-ը, Արդբ. ԳԽ-ը, ԼՂԻՄ Մարզային խորհուրդը, Մարզկոմը:

Իրավաքաղաքական այդ որոշումները ու դրանց ընդունման, իրականացման գործընթացը սերտորեն կապված էին հակամարտության դինամիկայի հետ և, ըստ էության, տեղի ունեցող մյուս գործընթացներին՝ մասսայական շարժումներին, բռնություններին, գործադուլներին և այլին զուգահեռ էին ընթանում. մի կողմից՝ դրանք էին հարուցում հակամարտության ու գործընթացների նոր ընթացք, մյուս կողմից էլ ուղղակիորեն ազդվում էին ընթացիկ իրողություններից: Զարգացումների այդ ընթացքը բնութագրական է շարժման սկզբնավորման պահից:

1988 թ. փետրվարի 20-ին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների XX գումարման խորհրդի արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց դիմելու Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդներին խնդրանքով «խորը ըմբռնման զգացում դրսևորել Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության իղձերին և լուծել ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ կազմից Հայկական ՍՍՀ կազմ հանձնելու հարցը, միաժամանակ միջնորդել ՍՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ՍՍՀ կազմից Հայկական ՍՍՀ կազմ հանձնելու հարցի դրական լուծմանը»[1]: Ըստ էության, որոշման հասցեատերեր էին դառնում ՀԽՍՀ-ը, Ադրբ. ԽՍՀ-ը և ԽՍՀՄ ԳԽ-ը, որոնք պետք է արձագանքեին ԼՂԻՄ որոշմանը: Մարզային խորհրդի որոշումը, որն ընդունվեց դրամատիկ պայմաններում, քանի որ Ստեփանակերտ գործուղված մոսկովյան ու ադրբեջանական ներկայացուցիչներն ամեն կերպ փորձում էին թույլ չտալ նիստի կայացումը, մի շատ կարևոր արձանագրում արեց ու ցույց տվեց, որ ԼՂ համար խնդիրը իրավաքաղաքական դաշտում է, ու լուծումն էլ ակնկալվում էր հենց այդ շրջանակում, այլ կերպ ասած՝ հիմնախնդրի կրողը քաղաքական սուբյեկտներն են, որոնցից էլ հայցվում է լուծում:

Առաջինը մոսկովյան արձագանքն էր. 1988թ. փետրվարի 21-ին ԽՄԿԿ Քաղբյուրոն շարժումը որակեց «էքստրեմիստական» ու «նացիոնալիստական», իսկ մարտի 24-ին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը Մ. Գորբաչովի գլխավորությամբ անհնար համարեց ԼՂԻՄ վարչաքաղաքական ու պետական պատկանելիության փոփոխությունը՝ անթույլատրելի համարելով սահմանների փոփոխությունը, սակայն ԽՍՀՄ Սահմանադրությունը չէր որոշում հանրապետությունների սահմանները, միևնույն ժամանակ, ԽՍՀՄ ԳԽ-ը, ըստ Սահմանադրության, իրավունք ուներ սահմանների փոփոխություն կատարելու[2]:

---

[1] Սովետական Ղարաբաղ, 21, II, 1988:

[2] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015, с. 380.

Ըստ էության, հենց այս որոշումը ծնունդ տվեց «սահմանների անփոփոխության» ու ինքնորոշման իրավունքի հակադրությանը: Միևնույն ժամանակ, կենտրոնական իշխանությունները չէին կարող անտեսել հիմնախնդրի գոյությունը, սակայն հարցը համարեցին տնտեսական խնդիր և 400 մլն ռուբլի հատկացրին ԼՂԻՄ սոցիալ-տնտեսական ծրագրերի համար 1988-95թթ.:

Դրան ի պատասխան՝ Ադրբեջանն էլ որոշում ընդունեց ԼՂԻՄ-ին սահմանկից դաշտային Ղարաբաղի արագացված սոցիալ-տնտեսական զարգացման ծրագերի համար 1989-95թթ.:

1988 հունիսի 13-ին Ադրբեջանի ԳԽ-ը որոշում ընդունեց ԼՂԻՄ վերաբերյալ՝ համարելով, որ առկա կարգավիճակը միանգամայն հարիր է առկա խնդիրների լուծման համար, նամանավանդ, կենտրոնական իշխանության կողմից տրամադվող միջոցների պարագայում, իսկ ԼՂԻՄ կարագավիճակի ու պատկանելիության փոփոխությունը կհակասի Ադրբեջանի հայ և ադրբեջանցի ժողովուրդների շահերին[3]:

Երկու օր անց՝ 1988թ. հունիսի 15-ին, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդը համաձայնություն տվեց «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու կապակցությամբ» և միջնորդեց ԽՍՀՄ ԳԽ-ին դրականորեն լուծելու հարցը[4], իսկ 1988 թ. հուլիսի 12-ին ԼՂԻՄ Ժողովրդական պատգամավորների XX գումարման խորհրդի 8-րդ նստաշրջանը հայտարարեց «Ադրբեջանական ԽՍՀ կազմից Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի դուրս գալու» մասին[5]: Մինչ այդ՝ հունիսի 17-ին, Ադրբեջանի ԳԽ նստաշրջանը ՀԽՍՀ ԳԽ որոշմանը բացասական էր արձագանքել, ինչին էլ ի պատասխան՝ հունիսի 21 ին ԼՂԻՄ Մարզխորհուրդը կրկին դիմում է Մոսկվային՝ հարցին դրական լուծում տալու համար, և առաջարկում որպես ժամանակավոր լուծում ԼՂԻՄ-ը

[3] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015, с 380.
[4] Նույն տեղում, էջ 380-381:
[5] Նույն տեղում, էջ 389-390:

ենթարկեցնել կենտրոնական իշխանություններին: ԼՂԻՄ Մարզային խորհուրդը, միևնույն ժամանակ, առաջարկում է սումգայիթյան ոճրագործությանն առնչվող քրեական գործերը Ադրբեջանի Գերագույն դատարանից փոխանցել ԽՍՀՄ Գերագույն դատարանին, քանի որ Ադրբեջանում տեղի էր ունենում դատական գործընթացի աղճատում: Սումգայիթյան ոճարագործության քրեադատավարական ոչ պատշաճ գործընթացը, ԼՂԻՄ հարցի առկախումը, Ադրբեջանի ԳԽ բացասական արձագանքը ՀԽՍՀ ԳԽ որոշմանը ստիպեցին ԼՂԻՄ Մարզխորհդին հուլիսի 12 որոշում ընդունել Ադրբեջանի կազմից դուրս գալու մասին[6]:

1988 թ. հուլիսի 18-ին տեղի ունեցավ ԽՍՀՄ ԳԽ Նախագահության նիստ, որը մերժեց ՀԽՍՀ խնդրանքը ԼՂԻՄ-ի վերաբերյալ:

Այնուամենայիվ, հարցը բաց էր մնում. իրավիճակի սրացումներն ու ծավալվող շարժումը թելադրեցին կենտորնական իշխանություններին ինչ-որ ելքեր ու լուծումներ փնտրել, և 1989 թ. հունվարի 12-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության որոշմամբ ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի Հատուկ կառավարման կոմիտեն՝ ութ հոգուց բաղկացած հետևյալ կազմով՝ Վոլսկի Արկադի՝ ԽՄԿԿ Կենտկոմի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ (կոմիտեի նախագահ), Բաբայան Սեմյոն՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողպատգամավորների մարզային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահ, Ջաֆարով Վագիֆ Ջաֆարօղլի՝ կուսակցության Շուշիի շրջկոմի առաջին քարտուղար, Միշին Վիկտոր՝ ԽՄԿԿ Կենտկոմի անդամ, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, Արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի քարտուղար, Պլիսով Վիկտոր՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր, ԽՍՀՄ ծանր, էներգետիկ և տրանսպորտային մեքենաշինության փոխնախարար, Սիդորով Վալերի՝ ԽՄԿԿ Կենտկոմի քարոզչության բաժնի ենթաբաժնի վարիչի տեղակալ, Կուպրեև Սերգեյ՝

[6] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015, с. 390.

ԽՍՀՄ ՆԳՆ ներքին ծառայության գեներալ-մայոր, Թովմասյան Վլադիմիր՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական վերահսկողության մարզային կոմիտեի նախագահ[7]:

Այս որոշումը ԼՂԻՄ տարածքային պատկանելիությունը չէր փոխում, ինչը չէր բավարարում հայկական կողմին, սակայն լուծում էր քաղաքական ենթակայության խնդիրը, և ըստ էության, ԼՂԻՄ-ում մտցվում էր կենտրոնական կառավարում՝ ի հաշիվ ԼՂԻՄ տեղական ինքնակառավարման: Կոմիտեն ուղիղ ենթակա էր Մոսկվային: Միևնույն ժամանակ, ԼՂԻՄ ում լուծարվեցին տեղական իշխանության մարմինները՝ Մարզային խորհուրդ և այլն, այսինքն, ԼՂ-ը դադարում էր լինել ինքնակառավարվող սուբյեկտ, հետևաբար չէր կարող քաղաքական ներկայացվածություն ունենալ և դիրքորոշում ներկայացնել:

Հանգամանք, որ հայցում էր հայերի դժգոհությունը, քանի որ վերջիններս առաջարկում էին տեղական իշխանության մարմինների պահպանում Կոմիտեին ենթարկվելու պայմանով: Կոմիտեի կառավարման շրջանում քայլեր կատարվեցին ԼՂԻՄ մի շարք հիմնարկ-ձեռնարկություններ ՀԽՍՀ ենթակայության տակ անցնելու ուղղությամբ, իսկ, օրինակ, ԼՂԻՄ գազային համակարգը տրվեց Գազպրոմին, և մարզի գազաֆիկացման աշխատանքներն արդեն իսկ սկսեց իրականացնել Հայտրանսգազը[8]: Այդ շրջանում վերբացվում է նաև Արցախի թեմը:

Ա. Ի. Վոլսկին Կենտրոնին ԼՂ կառավարմանն ավելի լայնածավալ մասնակցության կոչ էր անում: Այդ մասին նա նշում է 1989թ. հուլիսի 29-ին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին ներկայացրած իր զեկույցում, որը ներառում էր կոնկրետ խորհուրդներ և առաջարկներ[9]: Զուգահեռ աշխատում էր ԼՂ հարցերով հանձնաժողովը, որը ստեղծել էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդը:

---

[7] Բաբայան Ս., «Հատուկ կառավարման կոմիտե. առաջին քայլերը», Ազատ Արցախ, 12 հոկտեմբերի, 2018:
[8] Նույն տեղում:
[9] «Պրիմակովը Լեռնային Ղարաբաղի մասին. մաս I», https://mediamax.am/am/news/special-file/22003/ :

Մյուս կողմից էլ ԼՂԻՄ հայ բնակչությունը դեմ էր արտահայտվում մարզի վարչատնտեսական կառավարմանը Բաքվի կողմից, քանի որ Ադրբեջանը տնօրինում էր ԼՂԻՄ-ին հատակացված միջոցները, որոնցով իրականացվում էր բնակարանային ու արդյունաբերական շինարարություն միայն Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական հատվածում, օրինակ՝ Խոջալու, Շուշի և այլն, ինչը նախադրյալներ էր ստեղծում մարզում ժողովրդագրական իրավիճակը փոփոխելու համար: Հենց այդ ժամանակ ԼՂԻՄ-ում հայտնվեցին նաև թուրք մեսխեթցիները:

Բացահայտ դժգոհություն էր արտահայտվում առ այն, որ մարզային գործադիր կոմիտեի վերացումը տեղի բնակչությանը զրկել էր ինքնակառավարումից:

Ընդհանուր առմամբ, թե՛ Երևանում, թե՛ Ստեփանակերտում, թե՛ Բաքվում դժգոհ էին Հատուկ կառավարման կոմիտեին ԼՂԻՄ ենթակայությունից[10]:

Այնուամենայնիվ, իշխանության և համամարզային ինքակառավարման իրավունքն իրացնելու, քաղաքական սուբյեկտայնությունը վերականգնելու և իշխանության վակուումը լրացնելու նպատակով ձևավորվում է ԼՂԻՄ Ազգային խորհուրդ, որը մարզային ինքնակառավարման ներկայացուցչական մարմին էր՝ ձևավորված 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում հրավիրված ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում: Նախատեսվում էր, որ այն՝ որպես իշխանության մարմին, գործելու է մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի վերականգնումը՝ մարզը ղեկավարելու նպատակով: Ազգային խորհուրդը ունեցել է 80 անդամ, ընտրել նախագահություն: Նախագահության նախագահն էր Վ. Գփզորյանը, տեղակալները՝ Վ. Աթաջանյանը և Վ. Թովմասյանը: Համագումարում ընդունվել են որոշում, հռչակագիր և դիմումներ՝ ուղղված հատուկ շրջանի պարետին,

[10] Աբրահամյան Հ., «ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի ձախողումը», Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2016, էջ 4-13:

խորհրդային բանակի և ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումների սպաներին ու զինվորներին, ինչպես նաև ադրբեջանական ժողովրդին: Ըստ էության, Ազգային խորհուրդը կրկնում էր 1918-20 թթ. ԼՂ ինքնակառարման մոդելը նույն իշխանության վակուումի պայմաններում:

1989 նոյեմբերի 28-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ լուծարվում է ԼՂ Հատուկ կառավարման կոմիտեն: Դրա փոխարեն ստեղծվում է Հանրապետական Կազմկոմիտե (ադրբեջանա-ղարաբաղյան), որի ղեկավար է նշանակվում Ադրբեջանի կոմկուսի երկրորդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոն. սրանով փորձ է արվում վերադարձնելու Ղարաբաղը Ադրբեջանի անմիջական հսկողության տակ: Այս ռեժիմի օրոք և մասնակցությամբ տեղի ունեցավ «Օղակ» գործողությունը:

Կազմկոմիտեն ԼՂ-ն Բաքվին ենթարկեցնելու համար ստեղծված ռազմաքաղաքական մարմին էր՝ «ռազմակուսակցական» դիկտատուրա[11]:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի այդ որոշումը ծայրաստիճան բացասական արձագանք գտավ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ Հայաստանում: Ի պատասխան՝ ԼՂԻՄ-ում անցան բազմահազարանոց ցույցեր, որոնց ընթացքում ընդունվում էին քաղաքացիական անհնազանդության, նշված որոշումը բոյկոտելու, միութենական իշխանությունների հետ համագործակցությունից հրաժարվելու կոչ անող բանաձևեր, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին ուղղված դիմումներ՝ Հայաստանի ու ԼՂԻՄ վերամիավորման պահանջով:

Ի պատասխան ԽՍՀՄ ԳԽ որոշման՝ 1989 թ. դեկտեմբերի 1-ին Երևանում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստին ընդունվեց «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի

[11] Золян С., “Нагорный Карабах, проблема и конфликт”, Ереван, 2001, стр. 56-98.

վերամիավորման մասին» որոշում[12]: ԼՂԻՄ-ը մտցվեց ՀԽՍՀ սոցիալ-տնտեսական զարգացման պլանների մեջ: Միևնույն ժամանակ, Ադրբ. ԽՍՀ ԳԽ-ը դեկտեմբերի 4-ին որոշում է ընդունում կասեցնելու ԽՍՀՄ ԳԽ նոյեմբերի 28-ի որոշման այն կետերի իրագործումը ԼՂ-ում, որոնք չէին բխում Ադրբեջանի շահերից, այն է՝ ԼՂ համար ռեալ ինքնավարության ապահովումը և դեմոգրաֆիական փոփոխությունների անթույլատրելիությունը: 1990թ. հունվարին ԽՍՀՄ ԳԽ-ը չեղարկում է հայկական ու ադրբեջանական ԳԽ-ների ընդունած դեկտեմբերյան որոշումները՝ որպես ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող որոշումներ[13]:

Այնուամենայիվ, նպատակ ունենալով ժողովրդագրական փոփոխություններ իրականցնելու, Ադրբեջանի ԳԽ-ը 1990 թ. որոշում է ընդունում՝ ԼՂԻՄ-ում վարչաքաղաքական փոփոխություններ կատարելու մասին, որով, օրինակ, Խոջալու գյուղին տրվում է քաղաքի կարգավիճակ և այլն[14]:

Մինչև 1991 թ. օգոստոսյան խռովությունը իրադարձություններն ընթանում էին ԼՂԻՄ ինքնակառավարման օղակների ու հասարակության անհնազանդության և ԼՂ դեմ Պոլյանիչկոյի գլխավորած մարմնի պատժիչ գործողությունների տրամաբանությամբ. վերջինս հայտարարել էր, որ 1991թ. լինելու է «Ղարաբաղի տարի»: 1991թ. փետրվարին Ադրբ. ԽՍՀ ԳԽ նստաշրջանում ԼՂ հայերի տեղահանության ծրագիրն, ըստ էության, ընդունվել էր, իսկ մինչ այդ՝ հունվարին, ԼՂԻՄ-ում և հարակից տարածքներում Ադրբեջանը մտցրել էր նախագահական ուղիղ կառավարում[15]:

Կազմկոմիտեն իր իշխանությունն իրացնում էր բացառապես ուժային եղանակով՝ հենարան ունենալով ադրբեջանական ՕՄՈՆ-ը և ԼՂ ում տեղակայված

---

[12] Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի Որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, Երեկոյան Երևան. 4 դեկտեմբերի, 1989:

[13] Тер Саркисянц, “А. Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015, с. 490-492.

[14] Նույն տեղում, с. 410-411:

[15] Նույն տեղում, с. 419:

ԽՍՀՄ ներքին զորքերի զորամիավորումները: 1991 թ. օգոստոսյան պուտչից հետո, զրկված լինելով ԽՍՀՄ ուժային աջակցությունից, Կազմկոմտեն հեռանում է Ադրբեջան: Մինչ այդ, իհարկե, այն իր իշխանությունն իրացրել էր տեղահանությունների, խաղաղ բնակչության սպանությունների, պատանդառության, մարդու իրավունքների մասսայական ոտնահարումների միջոցով, որոնք արձանագրված էին իրավապաշտպան տարբեր զեկույցներում[16]: Պետք է նշել, որ այս բոլոր փոփոխություններն ու գործընթացները տեղի էին ունենում դեռևս կենտրական իշխանությունների կողմից ԼՂԻՄ-ում հաստատված հատուկ, ապա՝ արտակարգ դրության պայմաններում:

[16] Золян С., “Нагорный Карабах, проблема и конфликт”, Ереван, 2001, стр. 250-290.

Գլուխ 2.

Էթնիկ մոբիլիզացիան և բռնությունների սկզբնավորումը ղարաբաղյան կոնֆլիկտի ժամանակ (1988 թ.)

2.1. Մուտք

2007թ. միջազգային կազմակերպությունում աշխատող օտարերկրյա ծանոթներիցս մեկը լինում է Ադրբեջանում, գործի բերումով այցելում նաև Սումգայիթ: Սումգայիթյան իրադարձությունների մասին նրա հարցին պատասխանում են, թե նման բան չի եղել, իրեն սխալ են ասել:

Այս իրողությունը ցույց է տալիս, թե ինչ ուղղությամբ է ընթացել և որոշակիորեն ինչ հանգրվանի է հասել Ադրբեջանում ծավալվող դիսկուրսը՝ վերջին քսան տարիների իրադարձությունների շուրջ. մի կողմից՝ ԽՍՀՄ օրոք աննախադեպ էթնիկ բռնության օրինակ և խորհրդանիշ դարձած սումգայիթյան ջարդերի իրողության ժխում, մյուս կողմից՝ արդեն իսկ պետական ինստիտուցիոնալ մակարդակով ուղղակիորեն այլատացության սերմանում՝ ղարաբաղյան իրադարձությունների պատճառահետևանքային կապերի փոխատեղման միջոցով:

Անշուշտ, սումգայիթյան իրադարձությունների համատեքստում պետք է նկատի ունենալ, որ ոչ վաղ անցյալի այդ դեպքերի ականատեսը, այս կամ այն կերպ, եղել է քաղաքի ողջ բնակչությունը, որն, իհարկե, ունի իր անհատական հիշողությունը, միգուցե առկա են նաև կենցաղային դիսկուրսի տարբեր

դրսևորումներ[17], սակայն Ադրբեջանում ղարաբաղյան իրադարձությունների շուրջ վերջին երեսուն տարիների դիսկուրսը ձևավորվել է այլ ուղղվածությամբ և այլ ակտորների միջոցով, ինչի հետևանքով անհատական հիշողությունները, թերևս, չեն վերածվում կոլեկտիվ կամ ընդհանուր հիշողության կամ էլ անհատական ինքնարտահայտման ազատ դրսևորման, այլ ընթանում են այլ ուղղությամբ: Հենց այդ հանգամանքների հանրագումարն է հանգեցնում սումգայիթյան իրադարձությունների ժխտմանը զանգվածային սպանդի օջախ հանդիսացած քաղաքում, ինչի արդյունքում, թերևս, առկա է հակասություն մարդկանց անհատական հիշողությունների և թելադրվող մոտեցումների միջև:

Հայտնի է, որ հիշողությունը՝ որպես հասարակական ու մշակութային երևույթ, ազգակերտման ու պետականակերտման քաղաքականության կարևոր գործիքներից է, որը ենթադրում է ոչ միայն ազգի, խմբի կամ պետության համար կարևոր իրադարձությունների ամրագծում վերջիններիս կոլեկտիվ կամ պատմական հիշողության մեջ, կոլեկտիվ, հանրային հիշատակումներ, այլև պատմական «ամնեզիա» կամ մոռացում այն իրողությունների, որոնք այդ քաղաքականության ուղղվածության համտեքստում նպատկահարմար չէ հիշելը: Անշուշտ, մոռացման կամ պատմական ամնեզիայի տարբեր դրսևորումներ կան, կա նաև «հակահիշողություն» երևույթը, որի տակ նկատի են առնվում այն երևույթները, որոնք հակասում են կամ իրենց տեղը չեն գտնում հիշողության քաղաքականության ընդհանուր ուղղվածության մեջ: Միևնույն ժամանակ, պարտադիր չէ, որ «հակահիշողությունը» ենթադրի մոռացում, ժխտում կամ նենգափոխում: Այն նույնպես հիշողության մի մաս է:

Այլ է խնդիրը, երբ հասարակական, քաղաքական դիսկուրսը և հիշողության ընդհանուր քաղաքականությունը հանգեցնում են ժխտմանը, մոռացմանը,

[17] Անկախ նրանից, թե այդ իրադարձությունները ինչպես են մեկնաբանվում կենցաղային մակարդակում, և ինչպիսի մեկնաբանություններով են պարուրված նաև անհատական հիշողությունները, կարևոր է փաստի առկայությունը և այն կրող լինելու հանգամանքը, և այդ առումով աներկբա է, որ Սումգայիթի բնակչությունը այդ փաստի կրողն է:

կեղծմանը. այս մոտեցումները սումգայիթայն իրադարձությունների համատեքստում, ըստ էության, խրախուսում են էթնիկ բռնության կամ պատերազմի հետագա հնարավորությունները, տվյալ պարագայում որևէ մեկը իրեն պատասխանատու չի զգում մասսայական ջարդերի ու բռնությունների համար, և եթե նույնիսկ փաստը ընդունվում է, ապա համարվում է, որ դա իրենք հայերն են կազմակերպել:

2.2. Հակամարտության էթնիկացումը

1988թ. սկիզբ առած Ղարաբաղյան շարժումը ուղեկցվեց էթնիկ բռնության տարբեր դրսևորումներով: Դրանք իրենց մասշտաբներով, աշխարհագրական ընդգրկմամբ, ժամանակագրական սահմաններով, մեխանիզմներով, գաղափարական դրսևորումներով, ինչպես նաև զարգացման օրինաչափություններով ունեն իրենց առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Հակամարտությունն ունեցավ բռնության դրսևորումների տարբեր փուլեր ու զարգացումներ, որոնք, ի վերջո, հանգեցրին Ղարաբաղյան առաջին պատերազմին, իսկ 2020 թ. աշնանը՝ 44 օրյա կամ երկրորդ պատերազմին:

էթնիկ բռնության խնդիրների ու այն պայմանավորող գործընթացների պարզաբանման առումով կարևոր է ոչ միայն բռնության շուրջ հետագա դիսկուրսը, այլև այն դիսկուրսը, որն անմիջականորեն հանգեցնում է բռնության՝ որոշակի գաղափարների շուրջ համախմբելով մարդկանց ու մղելով նրանց խմբային բռնությունների՝ ընդդեմ մեկ այլ խմբի:

էթնիկ բռնությունը, լինելով խմբային գործողություն, որն իրականացվում է խմբի կամ նրա անունից ընդդեմ մեկ այլ խմբի, միաժամանակ մշակութային

երևույթ է, որը մշակութապես կառուցվում ու մեկնաբանվում է: Այն միաժամանակ սոցիալական ու դիսկուրսիվ պրակտիկա է[18]:

Հատկանշական է, որ խորհրդային իրականության մեջ էթնիկ բռնության զանգվածային առաջին դրսևորումները տեղի ունեցան հենց 1988թ. Ղարաբաղյան շարժման սկզբնավորման ընթացքում: Դրանք հայ-ադրբեջանական հարաբերությունների համատեքստում ունեցան իրենց առաջացման, ընթացքի ու զարգացման յուրահատուկ տրամաբանությունը, ինպես նաև իրենց մշակութային կառուցման օրինաչափություններն ու առանձնահատկությունները:

Այն հանգամանքը, որ դրանք տեղի ունեցան հենց խորհրդային իրողությունների պայմաններում, իր յուրահատուկ ազդեցությունն է թողնում այդ երևույթների վրա[19]:

Նախևառաջ, խորհրդային պաշտոնական գաղափարախոսության համաձայն, խորհրդային իրականությունը համարվում էր ազգերի համերաշխության և ինտերնացիոնալիզմի գաղափարների հիման վրա կառուցված հասարակություն, որտեղ խորթ էին համարվում այնպիսի երևույթներ, ինչպիսիք են էթնիկ բռնությունը, նացիոնալիզմը և այլն:

Միևնույն ժամանակ, խորհրդային իրողության առկայությունը ղարաբաղյան խնդրին առնչվող էթնիկ բռնությունների սկզբնավորմանը, տարածմանն ու դրսևորումներին վերաբերող խնդիրները դուրս է բերում հարցի սոսկ երկկողմանի՝ հայ-ադրեբջանական դիտարկման ու ընկալման շրջանակներից:

---

[18] В. Тищков, “Теория и практика насилия //Антрпология насилия”, СПб, 2001, с. 9-11.

[19] Հետաքրքրական է, որ Ղարաբաղյան շարժման ընթացքում տեղի ունեցած էթնիկ բռնությունների տարբեր տեսակներ՝ սկսած առանձին ընդհարումներից, ջարդերից, տեղահանություններից մինչև ռազմական բախումներ ու կիսապատերազմական գործողություններ, տեղի են ունեցել հենց խորհրդային իրականության պայմաններում:

Էթնիկ բռնությունը՝ որպես մշակութային երևույթ և դիսկուրսիվ պրակտիկա, ներառում է իրականացնողների ու զոհերի, ունի սեփական զարգացման տրամաբանությունը, մասնակիցներին, հեղինակների ու զոհերի մեկնաբանությունները, վարկածները, տեսակետները և այլն:

Ըստ այդմ էլ քաղաքական կոլեկտիվ բռնությունը չեն կարող իրականացնել դիսկուրսից դուրս գտնվող մարդիկ. որպեսզի կազմակերպվի ու իրականացվի, մարդիկ այդ մասին պիտի խոսեն[20]:

Հայտնի է, որ 1988 թ. փետրվարին Լեռնային Ղարաբաղում սկսվեց շարժում՝ ՀԽՍՀ հետ միանալու պահանջով: Մինչ ԼՂԻՄ մարզային խորհրդի՝ 1988 թ. փետրվարի 20-ի որոշումը՝ մարզի՝ Ադրբեջանի կազմից դուրս գալու և Հայաստանին միանալու մասին, Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտում սկսվում են միտինգներ այդ պահանջով: Համարվում է, որ առաջին միտինգը տեղի է ունենում փետրվարի 14-ին, իսկ այդ օրը՝ երեկոյան՝ մարզային ղեկավարության հետ խորհրդակցության ժամանակ, Ադրբեջանի կենտկոմի բաժնի վարիչ Ասադովը հայտարարում է, որ հարյուր հազար ադրբեջանցիներ պատրաստ են ցանկացած պահի ներխուժել Ղարաբաղ և կազմակերպել արյունալի սպանդ[21]:

Հիշյալ հարցադրումը ցույց է տալիս, որ սկզբից ևեթ ադրբեջանական հասարակությունում առկա է խնդրի էթնիկացման և էթնիկ բռնության լեգիտիմիզացիայի միտում: Դեպքերի հետագա զարգացումը ցույց տվեց նման տրամադրությունների զարգացման միտումները:

1988 թ. փետրվարի 22-ին ադրբեջանական Աղդամ քաղաքից բազմահազար ամբոխը շարժվում է դեպի Լեռնային Ղարաբաղ՝ ճանապարհին ամեն ինչ[22]

---

[20] В. Тищков, “Теория и практика насилия //Антрпология насилия”, СПб, 2001, стр. 9.

[21] Ал. Василевский, “Туча в горах”, //Аврорва, 1988, И 10// “Нагорный Карабах и вокруг него глазами независимых наблюдателей”, сост. С. Золян, Г. Мирзоян, Ер, 1991, стр. 78.

[22] Նույն տեղում, էջ 78:

ջարդուփշուր անելով: Հայերին «դաս տալու» համար, բացի Աղդամից, Ղարաբաղ են շարժվում նաև Բարդայի բնակիչները, որոնք միանում են աղդամյան ամբոխին[23]: Հիշյալ փաստը ցույց է տալիս ադրբեջանական հանրությունում հայերի նկատմամբ բռնության թույլատրելիության մասին ներքին դիսկուրսի առկայությունը, որը և լեգիտիմիզացնում է այդ երևույթները:

Ադրբեջանցիների շրջանում լուրեր էին տարածվում, թե իբր, հայերը բռնություններ են գործադրում կամ սպանել են ադրբեջանցիներին իրենց հավաքների ժամանակ[24], ինչը հայերի նկատմամբ բռնության լեգիտիմիզացիա էր ենթադրում:

Աղդամյան բռնարշավը նպատակ ուներ «վախեցնելու»[25], «դաս տալու» հայերին[26] կամ էլ «կարգուկանոն հաստատելու» ԼՂԻՄ հայկական գյուղերում[27]: Ասկերանի մատույցներում ամբոխը կանգնեցվում է, չպարզված հանգամանքներում զոհվում են երկու ադրբեջանցիներ: Զոհերից մեկին սպանում են հենց ադրբեջանցիները, մյուսի մահվան հանգամանքները հայտնի չեն[28]:

Ադրբեջանում դրանից անմիջապես հետո լուրեր են տարածվում, որ երկու երիտասարդներին սպանել են հայերը: Ադրբեջանական մեկ այլ մեկնաբանության համաձայն՝ Ստեփանակերտ-Աղդամ ճանապարհին տարերային ցույցի ժամանակ հայ միլիցիոներները սպանում են երկու ադրբեջանցի երիտասարդի:

Աղդամյան ջարդարար զոհերը ղարաբաղյան իրադարձությունների ադրբեջանական մեկնաբանության մեջ դառնում են առաջին զոհերը, որոնք զոհվում են հայերի կողմից ցույցի ժամանակ: Ակնհայտ է, որ դեպքերի հիշյալ մեկնաբանությունը կառուցում է «զոհի» կերպար՝ առանց տարբերակելու

---

[23] Р. Агаев, З. Ализаде. “Азербайджан: конец второй республики (1988-1993)”, Москва, 2006, стр. 307-308.
[24] L. Abrahamian, “Armenian Identity in a Changing World”, Costa Mesa, California, 2006, p. 262.
[25] Թ. Հակոբյան, «Կանաչ ու սև. արցախյան օրագիր», Երևան-Ստեփանակերտ, 2008, էջ 31-32:
[26] Р. Агаев, З. Ализаде, стр. 307-308.
[27] Վ. Կրիվապուսկով, «Խռովահույզ Ղարաբաղ», Երևան, 2008, էջ 84-85:
[28] Ал. Василевский, “Туча в горах”, стр. 78.

պատճառահետևանքային կապերը, ավելին՝ կառուցելով երևույթի կեղծ տրամաբանություն, որը նույնական է, ասենք, նրա հետ, որ, օրինակ, Ստալինգրադի ճակատամարտի նացիստ զոհերի մասին նշվի. «Գերմանացի զոհերը՝ սպանված ռուսների կողմից»[29]:

Եթե ադրբեջանական միջավայրում աղդամյան զոհերի «մեղավոր» դառնում են հայերը, ապա հայկական միջավայրում այն կարծիքը կար, որ երկու երիտասարդ ջարդարարներին սպանել են ադրբեջանցի միլիցիոներները կամ խորհրդային զինվորականները:

Աղդամյան դեպքերի կապակցությամբ կենտրոնական և ադրբեջանական ԶԼՄ-ները հաղորդում են երկու ադրբեջանցիների զոհվելու մասին Աղդամի և Ասկերանի բնակչության միջև բախման հետևանքով:

Այս դեպքերի նշյալ մեկնաբանությունը ստեղծում կամ կառուցում է երևույթի նոր համատեքստ՝ առաջին պլան մղելով զոհերի և նրանց էթնիկ պատկանելիության խնդիրը, անտեսելով բռնության նախաձեռնողներին և հավասարեցնելով երկու կողմերին, համարելով այն երկկողմանի բախում, ինչը խնդրի էթնիկացման միտումների ու տրամաբանության մեջ է:

Միևնույն ժամանակ, կենտրոնական իշխանությունները երևանյան, ստեփանակերտյան խաղաղ ցույցերն ու միտինգները և սկսված շարժումը բնութագրում են որպես ծայրահեղական, էքստրեմիստական, նացիոնալիստական[30]: Հիշյալ գնահատականները կրկնում և տարածում են նաև ադրբեջանական ԶԼՄ-ները: Ըստ մի տեղեկության՝ դեռևս 1988 թ. փետրվարի 21-ին ադրբեջանական ԶԼՄ-ները ԼՂԻՄ-ում տեղի ունեցած իրադարձությունները

---

[29] L. Abrahamian, “Armenian Identity in a Changing World”, Costa Mesa, California, 2006, p. 262.

[30] Խորհրդային գաղափարախոսության համաձայն՝ «նացիոնալիստական», «նացիոնալիստ» տերմիններն ունեին ընդգծված բացասական իմաստ և հակոտնյա էին խորհրդային իրողություններին:

ներկայացրել են որպես առանձին «էքստրեմիստական խմբավորումների» գործունեության արդյունք[31]:

Ստեղծվում է մի իրավիճակ, երբ, կարծես թե, «մեղավորին» պատժելու խնդիրը լեգիտիմացվում է: Իհարկե, կենտրոնական ԶԼՄ-ների գնահատականների տրամաբանությունը և ադրբեջանական հասարակական ընկալումների տրամաբանությունը՝ «մեղավորի» կամ նրան պատժելու, դատապարտելու վերաբերյալ, տարբեր են, սակայն դրանք հատվում են մի տեղում առ այն, որ հայերը «մեղավոր» են:

Բռնության կառուցվածքաբանությունը ենթադրում է ոչ միայն և ոչ այնքան բռնության ակտի, որքան սոցիալական ու մշակութային համատեքստերի ուսումնասիրություն, որը թույլատրում կամ, հակառակը, արգելակում է բռնության իրականացումը: Տարբերությունները, որոնք կախված են մշակութային ավանդույթից, նախևառաջ վերաբերում են մշակութային համատեքստին-կոնֆլիկտի առիթին, նրա մշակութային ձևերի ընկալմանը, մեկնաբանությանը կամ «կոնֆլիկտային» իրավիճակների և դրանց արդյունքների հիմնավորումներին ինչպես բռնության իրականացնողների, այնպես էլ զոհերի կողմից[32]:

1988թ. փետրվարյան օրերին, երբ Ստեփանակերտում ցույցեր ու միտինգներ էին տեղի ունենում, իսկ դրանք ընթանում էին «Միացում», «Լենին, պարտիա, Գորբաչով» և նման լոզունգներով[33], համաձայն մի վկայության, շուշեցի (նաև Շուշիի շրջանի) ադրբեջանցիները պատրաստ էին իջնելու Ստեփանակերտ, ինչի արդյունքում արյունահեղությունն անխուսափելի կլիներ: Ադրբեջանական աղբյուրը նշում է, որ շուշեցիների ու աղդամցիների տրամադրությունները նույն էին. «Նույնը կատարվում էր Աղդամում»: Նույն մտավորականի հաղորդմամբ

[31] Ал. Васлиевский, “Туча в горах”, с. 78.
[32] Н. Гиренко, “Морфология идеология и стратегия насилия //Антроплогия насилия”, СПб. с. 89.
[33] Т. Де Ваал, “Черный сад. Армения и Азербайджан между миром и войной”, стр. 34.

իրենք աշխատում էին հանդարտեցնել կրքերը Շուշիում, միևնույն ժամանակ. «Պետք է պատրաստ լինենք հակահարված տալու, եթե հայերը շարունակեն»[34]:

Վերը նշված փաստերը ցույց են տալիս, որ երևույթների շուրջ երկու հասարակություններում ընկալումները տարբեր էին. եթե հայերի պարագայում այն քաղաքական պայքար ու խնդիր էր, ապա ադրբեջանցիների ընկալմամբ այն արդեն իսկ էթնիկական կոնֆլիկտ էր, այստեղից էլ գալիս էր «հայերին պատժելու» մտայնությունը: Այսինքն, «պատասխանը» տրվում էր ոչ թե քաղաքական մակարդակում, այլ էթնիկ, ընդ որում՝ սկզբից ևեթ գործիք են դառնում բռնության դրսևորումները կամ դրանց փորձերը՝ որպես քաղաքական վարքի ձևեր. համենայն դեպս, նման մտայնության առկայությունը մինչ Սումգայիթը արդեն առկա էր:

Միևնույն ժամանակ, խորհրդային կենտրոնական իշխանությունների տված գնահատականները, երբ շարժումը բնութագրվում էր որպես ծայրահեղական, նացիոնալիստական ու էքստրեմիստական, ստեղծում էին մի վիճակ, որ շարժումը կրող հանրությունը «օտարվում էր» խորհրդային իրականությունից, համարվում էր խորհդային ազգային համերաշխությունը խարխլող երևույթ:

Հայտնի է, որ բռնությունները նախևառաջ ենթադրում են գաղափարախոսական որոշակի իմաստավորում ու հիմնավորում, որոնց առաջին քայլերն են բռնության ենթակա խմբի «մեղավորությունը», նրա օտարումը և բռնության համար «ընդունելի» դարձնելը: Ընդ որում՝ ազգային հիմքի վրա սոցիալական միջավայրից խմբի դուրսմղման համար փաստարկումը կարող է ունենալ տարբեր դրսևորումներ՝ մարդկանց կամ խմբի վարկաբեկում, սոցիալական միջավայրի և հասարակության համար անհարիր ու անթույլատրելի արարքների ու գործողությունների մեջ մեղադրում, անընդունելի արժեքների ու

[34] Т. Де Ваал, “Черный сад. Армения и Азербайджан между миром и войной”, стр. 34:

նորմների պատկանելիության մեղադրում միայն այն բանի համար, որ վերջիններս տվյալ ազգային խմբի անդամ են, և այլն[35]:

Տվյալ պարագայում կենտրոնական իշխանությունների՝ շարժմանը տված գնահատականները տրված էին խորհրդային դիտանկյունից, միևնույն ժամանակ, սակայն, ամրապնդում էին շարժման, նրա մասնակիցների «մեղավոր» լինելու հանգամանքը: Ադրբեջանցիների պարագայում հայերի «մեղավորությունը», բնականաբար, չէր կապվում խորհրդային իրականությանը «անհարիր» գործունեության հետ. նրանց ընկալմամբ այդ ամենը «անհարիր էր» հենց ադրբեջանականության կամ «իրենց հողերի» նկատմամբ հավակնություն ունենալու առումով:

Ահա այս իրավիճակում 1988 թ. փետրվարի 27-29-ը էթնիկ բռնության հզոր ալիքը՝ հայկական ջարդերի տեսքով, բռնկվեց Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում: Այն առաջին էթնիկ ջարդը/պոգրոմն էր խորհրդային տարածքում[36]:

Այդ ցույցերն ու միտինգները սկզբից նեթ աչքի են ընկնում խոսքային բռնության կամ բռնության վերբալացման դրսևորումներով, որով և տեղի է ունենում բռնության խոսքային լեգիտիմիզացիան: Խոսքային բռնությունը բռնության կարևոր բաղադրիչներից է[37]: Սումգայիթյան իրադարձությունների ընթացքում դրա վկայություններից են, օրինակ, «մահ հայերին» կոչերը: Խոսքային բռնության համեմատաբար մեղմ դրսևորումներից են «հայերը պետք է հեռանան» պահանջ-կոչերը: Հայերի նկատմամբ բռնության կոչեր էին անում, օրինակ, սումգայիթյան դպրոցներից մեկի տնօրենը, քաղաքի թատրոնի դերասանուհիներից մեկը և այլք[38]: Խորհրդային պաշտոնյաների ներկայությունը

[35] Н. Гиренко, “Морфология идеология и стратегия насилия //Антроплогия насилия”, СПб. стр. 101.
[36] Սումգայիթյան իրադարձությունների վերաբերյալ տեղեկությունները մեջբերվում են՝ ըստ հետևյալ աշխատությունների՝ “Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев”, сост. С. Шахмурадян, Ер, 1989; “Сумгаит…Геноцид…Гласность?”, сост. Г. Улубабян, С. Золян, А. Аршакян, Ер, 1989:
[37] В. Тишков, “Теория и практика насилия //Антрпология насилия”, СПб, 2001, с. 17.
[38] “Сумгаит…Геноцид…Гласность?”, стр. 13.

սումգայիթյան միտինգներին /շրջկոմի առաջին, երկրորդ քարտուղարներ/ սոցիալական որևէ արգելք չհանդիսացան զանգվածային բռնությունների համար:

Այս կամ այն կերպ քաղաքի հայազրկումը, ըստ էության, տվյալ պահին համընդհանուր, զանգվածային ու ընդունելի գաղափար էր դարձել:

Պետք է նկատի ունենալ, որ սումգայիթյան ցույցերն ու միտինգները չունեին որևիցե սոցիալական կամ հակախորհրդային ընդվզման նշույլ իսկ[39]:

Սումգայիթյան իրադարձությունները ծնում են նաև իրենց նոր «հերոսներին» կամ ղեկավարներին: Դրանցից էին, օրինակ, այն սադրիչները, որոնք ելույթ էին ունենում՝ Հայաստանում, իբր, ադրբեջանցիների նկատմամբ բռնություններ տեղի ունենալու մասին, կամ այդ համատեքստում հանդես գալիս որպես կեղծ փախստական Ղափանից[40]: Դրանցից էր, օրինակ, սումգայիթցի բրիգադիր Ա. Մեհդիևը, որը հետագայում ագիտացիայի ու բռնությունների կազմակերպման համար դատապարտվեց[41]: Ղեկավարներից մեկն էր Ա. Ահմեդովը, որը բանվոր էր Սումգայիթում և անձամբ էր գլխավորում և իրականցնում բռնություններն ու սպանությունները: Պետք է նկատի ունենալ, որ Հայաստանում ու Ղարաբաղում ադրբեջանցիների նկատմամբ բռնություններ կիրառելու մասին կեղծ լուրերն էին, որ մոբիլիզացնում էին բռնությունները:

Ըստ էության, աղդամյան ու սումգայիթյան իրադարձությունների շուրջ ադրբեջանական ներքին դիսկուրսը կառուցվում էր հայերի կողմից ադրբեջանցիների նկատմամբ բնություններ կիրառելու կեղծ լուրերի տարածման միջոցով:

---

[39] Սումգայիթի շրջկոմի առաջին ու երկրորդ քարտուղարները ազատորեն ելույթ էին ունենում այդ միտինգներիին, առաջնորդում ցույցերը, նրանց ներկայությամբ տեղի էին ունենում բռնության կոչեր, սադրիչ ելույթներ: Միևնույն ժամանակ, նրանց իշխանության լեգիտիմությունը կասկածի տակ չէր դրվում հրապարակի կամ ամբոխի կողմից, ի հակադրություն երևանյան միտինգների ու ցույցերի՝ կուսակացական ղեկավարներ չէին առաջնորդում:

[40] О. Кулиш, Д. Мелков, “Черными семенами не прорасти //Социалистическая индустрия”, , 27 марта. 1988.

[41] “Настал ли час расплаты?”, Коммунист, 30 октября, 1988, “Нагорный Карабах и вокруг него”, с. 118-128.

Էթնիկ բռնությունը ակտուալացնում է «մենք» և «նրանք» հակադրությունն ու մշակութային սահմանները: Այդ իրավիճակում առաջ են գալիս մշակութային սահմանի նոր ցուցիչներ, որոնք, սակայն, ոչ միայն սահմանազատիչ դեր են կատարում տարբեր էթնիկ հանրությունների միջև, այլև էթնիկ բռնության պարագայում տարանջատում են զոհին ու բռնություն իրականացնողին: Սումգայիթյան ջարդերի պարագայում, բացի հայերին փնտրել, գտնելու համեմատաբար սովորական ու պարզ միջոցներից՝ հարևանների մատնություններ, բնակարանների փնտրտուք և այլն, եղել են նաև այլ ձևեր, օրինակ՝ ջարդարարները մարդկանց ստիպել են արտասանել «ֆնդդ» բառը. համարվել է, որ հայերը չեն կարողանում ճիշտ արտասանել այդ բառը և արտասանական սխալ են թույլ տալիս: Մեկ այլ դեպքում զոհերի հայ լինելը մատնել է «քառասունքի» սեղանին դրված հացը. համարվում է, որ ադրբեջանցիները «քառասունքի» սեղանին հաց չեն դնում:

Հայտնի է, որ սումգայիթյան ջարդերը ուղեկցվեցին հայերի զանգվածային սպանություններով: Էթնիկ բռնության համատեքստում սպանության երևույթը, ինչպես ցույց են տալիս փաստերը, իր ողջ ողբերգականությամբ հանդերձ, նույնպես որոշակի մշակութային փոխպայմանավորվածություն ունի՝ ձևավորվելով մշակութային համապատասխան բաղադրիչներով՝ կապված զոհի և բռնության իրականացողների էթնիկ, սեռային պատկանելիության հետ և այլն:

Սումգայիթյան ջարդերի պարագայում առկա են հայ կանանց հրապարակային մերկ պարեցնելու, բռնաբարելու ու սպանելու փաստերը: Նույն երևույթը (կանանց մերկ պարեցնելու, հետապնդելու) երեք ամիս անց՝ 1988 մայիսին, տեղի է ունենում Ղազախում: Ուշագրավ է, որ ղազախյան պոգրոմների հեղինակներն ու հրահրիչները Բաքվից էին: Պետք է նշել, սակայն, որ Ղազախի հայերի ջարդերն այդպես էլ մնացին ստվերում՝ հասարակական, հրապարակային քննարկման ու լուսաբանման չարժանանալով: Ուշագրավ է, որ հայ կանանց նման

սպանությունները հենց նույն եղանակով արձանագրվում են Ադանայի՝ 1908 թ. ջարդերի ժամանակ, ինչպես նաև 1915թ. Հայոց ցեղասպանության ընթացքում: Ըստ էության, սպանության նման տեխնոլոգիան խոսում է մշակութային որոշակի կոդավորման մասին, որը ժամանակային, տարածական ու մշակութային տրանսմիսիա է ունեցել՝ դարասկզբի Օսմանյան կայսրությունից մինչև 20-րդ դարի վերջի խորհրդային իրականություն ու ադրբեջանական հանրություն:

Միևնույն ժամանակ, սումգայիթյան ջարդերը ծնեցին նոր դիսկուրս, որով և պայմանավորվեց իրադարձությունների հետագա ընթացքը: Կենտրոնական իշխանություններն այն որակեցին որպես խուլիգանություն՝ դատական գործընթացը ցրելով տարբեր քաղաքներում ու դատարաններում, ըստ էության, փորձելով մոռացության տալ կամ լղոզել այն: Հայ իրականության մեջ այն իսկույն ևեթ համեմատվեց 1915թ. Հայոց ցեղասպանության հետ՝ ԽՍՀՄ իշխանություններրից պահանջելով արդարացի պատիժ ու գնահատական[42]: Ադրբեջանում այն այդպես էլ դատապարտման չարժանացավ, և հասարակական լռությունը լռելյայն համաձայնություն էր ենթադրում, իսկ քիչ ավելի ուշ ջարդերն արդարացնելու խնդիրը ծնեց նոր մոտեցում՝ այն գցել հայերի վրա[43]:

Հատկանշական է, որ սումգայիթյան ջարդերի պատասխանատվությունը հայերի վրա գցելու գցելու մոտեցումը, թե իբր հայերն են այն կազմակերպել, տարածված է նաև ներկայումս[44]

---

[42] Հ Մարության, «Հայ ինքնության պատկերագրությունը. ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը», հատոր Ա, Երևան, 2009, էջ 125 -252:

[43] Այդ շրջանում առաջ քաշված հիմնական տեսակետն այն էր, որ հայերի ջարդերը կազմակերպվել են հենց հայերի կողմից: Այս մոտեցումը ձևակերպել է ակադեմիկոս Զիյա Բունիաթովը; Буниятов З., “Почему Сумгаит?”, Элм, май 13 и 19, 1989, сб. “Азербайджанская аргументация и ее опровережние“, Ереван, 1989, стр. 21-26.

[44] Рамиз Мехтиев, “Горис-2010: сезон театра абсурда”, http://ru.trend.az/regions/scaucasus/azerbaijan/1773914.html .

2.3. 1988, նոյեմբեր

Սումգայիթի ծնած դիսկուրսը բերեց նոր բռնություններ. Ադրբեջանում 1988 թ. վերջին հայերի նկատմամբ տեղի ունեցան մասսայական նոր բռնություններ ու ջարդեր, որոնց ժամանակ տեղի ունեցան սումգայիթյան ոճրագործների հրապարակային հերոսացումներ, իսկ 1988 թ. վերջին Հայաստանում ադրբեջանցիների նկատմամբ բռնություններն արդեն իսկ ընկալվեցին որպես պատասխան Սումգայիթին:

Այդ շրջանը հայերի նկատմամբ բռնությունների երկրորդ ալիքն էր, և դրանցից ամենախոշորները տեղի ունեցան Կիրովաբադում, Շամախիում, Շամխորում, Մինգեչաուրում: Նույն ժամանակահատվածում՝ 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին, տեղահանվեցին Արցախի հյուսիսում՝ Խանլարի, Դաշքեսանի, Շամխորի ու Գետաբեկի լեռնային և նախալեռնային մասերում գտնվող 50 հայկական բնակավայրերի, ինչպես նաև Կիրովաբադի (Գանձակ) 48 հազարանոց հայ բնակչությունը: 1988-1990 թթ. Ադրբեջանում հայ ազգաբնակչության նկատմամբ հալածանքների, բռնությունների, ջարդերի և սպանությունների գագաթնակետը դարձան 1990 թ. հունվարին Բաքվի հայերի զանգվածային սպանություններն ու վերջնական տեղահանումը:

1988թ. աշնան էթնիկ բռնությունների հերթական ալիքը ընդգրկեց գրեթե ողջ Ադրբեջանը՝ գյուղական ու քաղաքային բնակավայրերը, որտեղ կար հայ բնակչություն: Բռնության հենց այս ալիքի ընթացքում հայաթափվեց ողջ Արդրբեջանի հայ բնակչությունը՝ բացառությամբ Բաքու քաղաքի, որը, չնայած, նույնպես ենթարկվեց հակահայկական ջարդերի ու բռնությունների, այունամենայնիվ մինչև 1990թ. ջարդերը այնտեղ դեռ շարունակվում էին հայեր ապրել:

1988 թ. աշնան բռնությունների առանձնահատկությունն այն էր, որ դրանք ընդգրկեցին ողջ հանրապետությունը՝ ձեռք բերելով համընդհանուր բնույթ. եթե աղդամյան, սումգայիթյան դեպքերը իրենց ընդգրկմամբ ու անմիջական հետևանքներով ունեին համեմատաբար լոկալ բնույթ, ապա 1988 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին Ադրբեջանում էթնիկ հալածանքները ու դրանց ուղեկցող բռնությունները հասան իրենց բարձրակետին, ու դրանք իրենց արձագանքներն ունեցան նաև Հայաստանում, որտեղ իննամսյա խաղաղ գործընթացներից հետո ևս գրանցվեցին էթնիկ բռնության դեպքեր[45]:

Բռնությունների այս փուլի մի կարևոր առանձնահատկությունն այն էր, որ դրանք տեղի էին ունենում Մոսկվայում ընթացող սումգայիթյան դատավարությանը զուգահեռ: Մի կողմից՝ ԽՍՀՄ մայրաքաղաքում ընթանում է նման դատավարություն, մյուս կողմից՝ Ադրբեջանում սկիզբ է առնում ու լայն տարածում ստանում էթնիկ բռնության մի նոր ալիք, որի ժամանակ տեղի են ունենում սումգայիթյան ոճրագործների հրապարակային ու հասարակական հերոսացումներ: Օրինակ՝ հենց այդ ժամանակ Մոսկվայում ընթանում էր սումգայիթյան գլխավոր ոճրագործներից Ահմեդովի դատավարությունը: Վերջինս, ի վերջո, դատապարտվում է մահվան, իսկ այդ նույն ժամանակ ու դրան զուգահեռ Բաքվի միտինգներում ընթանում են Ահմեդովի ու մյուսների հրապարակային ու հասարակական հերոսացումները վերջիններիս ցուցապաստառային լուսանկարներով[46]:

Այս հանգամանքը վկայում է, որ սումգայիթյան իրադարձությունների շուրջ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների թելադրած դիսկուրսը որևէ

---

[45] Abrahamian, L., “Typology of Aggressiveness and National Violence in the Former USSR”, International Journal on Minority and Group Rights, Vol. 4, No. 3/4, Special Issue on Ethnicity and Conflict in Europe and Beyond (1996/97), pp. 263-278; International Journal on Minority and Group Rights, Vol. 4, No. 3/4, pp. 263-278.

[46] “Теперь я знаю, что чуствовали евреи Германии в 1939 году”, Бакинский дневник, (KRUG) еженедельник, 23.07.1989; “Нагорный Карабах и вокруг него”, с. 178-185; К. Михайлов, “Нам вместе жить”, Собеседним ИЗ, 1989, “Нагорный Карабах и вокруг него”, с. 186 -199.

ազդեցություն չուներ հետագա բռնությունների կանխարգելման վրա և, ըստ էության, չկատարելով այդ ֆունկցիան, խրախուսում էր բռնությունները:

Էթնիկ բռնության այս նոր փուլը Ադրբեջանում սկսվում է Թոփխանա կոչվող վայրի շուրջ պատմությամբ: 1988 թ. հոկտեմբերի 23-ին ԼՂԻՄ իշխանությունները որոշում են ամայի այդ վայրում կառուցել Երևանի ալյումինի գործարանի պանսիոնատ: Մոտ մեկ ամիս անց ադրբեջանական ԶԼՄ-ները սկսում են հակահայկական արշավ՝ ներկայացնելով, թե, իբր, Թոփխանան բնական ու մշակութային արժեքավոր հուշարձան է, և հայերը ոտնձգություն են կատարում նրա դեմ[47]: Այն նույնացվում է, օրինակ, ռուսների մոտ իրենց նշանակությամբ հայտնի Բորոդինոյի կամ Կուլիկովոյի հետ: Թոփխանայի թեման չի մնում մամուլի էջերում, այլ դառնում է ադրբեջանական հանրահավաքների քննարկման նյութ, հակահայկական հիստերիայի աղբյուր: Թեև ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները խնդիրը պարզաբանելու համար հանձնաժողով են ուղարկում, և այն նույնպես եզրակացություն է տալիս, որ այդ վայրը ոչ մի բնական ու մշակութային հուշարձան չէ, այլ պարզապես ամայի տեղանք, սակայն այն որևէ ազդեցություն արդեն չի թողնում բռնկված հակահայկական հիստերայի ու մոլեգնող բռնությունների վրա:

Թոփխանան դարձավ հայերի դեմ ուղղված էթնիկ բռնությունների մոբիլիզացիոն հիմնական գաղափար. տարածքի սրբազան ու արժեքավոր ընկալման ձևավորումը միտված էր նաև հավաստելու ԼՂԻՄ տարածքի ադրբեջանական լինելու պատմական հիմնավորումը, այսինքն՝ եթե կա նշանավոր ադրբեջանական հուշարձան, ապա ինքնաբերաբար տարածքը նույնպես համարվում է ադրբեջանական և պատմականորեն արժևորվող: Միևնույն ժամանակ, հայերն այս պարագայում հանդես են գալիս որպես սրբության,

[47] Abrahamian, L., “Typology of Aggressiveness and National Violence in the Former USSR”, International Journal on Minority and Group Rights Vol. 4, No. 3/4, Special Issue on Ethnicity and Conflict in Europe and Beyond (1996/97), pp. 263-278 .

պատմական, մշակութային, բնական հուշարձանի դեմ ոտնձգություններ կատարողներ, որոնց պետք է, բնականաբար, պատժել:

Միևնույն ժամանակ, հատկանշական է, որ Թոփխանայի գաղափարը, թեման և երևույթը ձևավորվեցին ադրբեջանական պաշտոնական ԶԼՄ-ներում, ընդ որում՝ սադրանքը տեղ գտավ մի քանի թերթերում և պաշտոնական «Ազերինֆորմի» հաղորդագրության մեջ: Տվյալ դեպքում կարելի է ենթադրել կազմակերպված ու ուղղորդված սադրանքի մասին: Պետք է նաև նկատի ունենալ, որ խորհրդային ԶԼՄ համակարգը գործում էր կուսակցական վերահսկողության ներքո, կար գրաքննական համակարգ և այլն: Թեև այդ պարագայում խորհրդային վերահսկողության ֆունկցիաները կարող էին լավ չաշխատել, ունենային որոշակի լիբերալիզմ, այնուամենայնիվ, Թոփխանայի թեմայի ուղղվածությունը և ընդգրկումը խոսում են որոշակի կազմակերպվածվության ու ուղղորդության մասին: Եթե նույնիսկ արդեն կար լիբերալիզմ ԶԼՄ-ներում, ապա հատկանշական է, որ ժողովրդավարական այդ նորմը օգտագործվում էր սադրանքի ու բռնության հրահրման համար: Միևնույն ժամանակ, եթե առաջին կեղծ հաղորդագրությունը տեղ է գտնում նոյեմբերին, ապա մյուս կեղծ հոդվածները արդեն լույս էին տեսնում պարետային ժամի ու հատուկ դրության պայմաններում դեկտեմբերի սկզբներին:

Պետք է նկատի ունենալ, որ Բաքվի՝ այդ շրջանի հանրահավաքները ցուցադրվում էին տեղական հեռուստատեսությամբ, ինչն, անշուշտ, նպաստում էր հասարակական ու խմբային մոբիլիզացիա ապահովելուն: Ընդ որում՝ հակահայակական կոչերի հեղինակներ են դառնում ադրբեջանական մտավորականության ներկայացուցիչները՝ Զ. Խանլարովա, Վահաբ Զադե, Անար և այլք:

Ամփոփելով պետք է նշել, որ բռնության սկզբնավորումը դարաբաղյան կոնֆլիկտի ժամանակ ունեցել է իր զարգացման դինամիկան ու համապատասխան դիսկուրսը: Նախևառաջ, դրա հիմքում կար հայերին պատժելու գաղափարը:

Միևնույն ժամանակ, արդարացնելու համար բռնության ակտը, ինչպես նաև ապահովեու համար էթնիկ ու խմբային մոբիլիզացիան առաջ են գալիս բռնությունների մեջ հայերին մեղադրելու կեղծ գաղափարներ, սադրիչ կոչերի, լուրերի տարածման միջոցով կառուցվում է կեղծ իրականություն՝ Աղդամ, Սումգայիթ: Եթե այս փուլում բռնության դիսկուրսը կառուցվում էր նման գաղափարների, սադրիչ լուրերի ու տեղեկությունների շուրջ, ապա սումգայիթյան իրադարձությունների շուրջ դիսկուրսը ծնում է նոր բռնություններ 1988 թ. աշնանը: Միևնույն ժամանակ, 1988 թ. աշնան բռնությունները հստակ ունեին իրենց առանձնահատկությունը. նախ, կեղծ իրականությունը կառուցվում էր Թոփխանայի շուրջ՝ իբրև պատմական ու մշակութային հուշարձանի, որի նկատմամամբ հայերն, իբր, ոտնձգություններ են կատարում, հետևաբար արդարացվում էր հայերին պատժելու գաղափարը: Երկրորդ, ի տարբերություն Աղդամի ու Սումգայիթի, որտեղ կեղծ իրականությունը կառուցվում էր լուրերի, առանձին սադրիչների միջոցով, այս պարագայում այն հետևողականորեն ու որոշակիորեն ուղղորդված կառուցում են ադրբեջանական ԶԼՄ-ները, բացի դրանից՝ հանրահավքներն ու ցույցերն ակտիվորեն քարոզվում են տեղական հեռուստատեսությամբ, սադրիչ կոչերի հեղինակներ են դառնում մտավորականության ներկայացուցիչները, ինչն, անշուշտ, նպաստում էր խմբային մոբիլիզացիայի ավելի բարձր աստիճանի, որն արդեն բռնությունը դուրս էր բերում լոկալ շրջանակներից՝ տարածվելով ողջ հանրապետությունով:

Բռնության սկզբնավորումը և դրա շուրջ դիսկուրսը ծնում են նոր բռնություններ, որոնք իրենց ընդգրկմամբ, ինստիցուցիոնալ սպասարկման ու ծավալման, մասշտաբների ու հետևանքների առումով գերազանցում են նախորդներին:

Գլուխ 3.

Ազգային, հասարակական ինքնակազմակերպման մեխանիզմները ԼՂԻՄ-ում՝ որպես քաղաքացիական դիմադրություն

Ղարաբաղյան շարժումը թե՛ Հայաստանում, թե՛ ԼՂ-ում հասարակական ու կազամկերպչական փոխակերպումների բարդ ու դինամիկ ընթացք է ունեցել՝ բոլոր դեպքերում էլ լինելով քաղաքացիական, հանրային-քաղաքական ինքնակազմակերպման միջոց ու մեխանիզմ: Այդ փոխակերպումների բնույթն ու ընթացքը պայմանավորված էին տարբեր գործոններով՝ թելադրված իրավիճակով ու առկա մարտահրավերները հաղթահարելուն ուղղված ջանքերով: Այս գործընթացները, ԼՂԻՄ-ում ու Հայաստանում ունենալով ընդհանրություններ նպատակների շուրջ, միանգամյան տարբեր կերպ էին ընթանում՝ միջավայրի ու մարտահրավերների առաձնահատկություններից թելադրված:

Ղարաբաղյան շարժման ինքնակազմակերպական, քաղաքացիական բնույթի ու մեխանիզմների մասին հանրային ու հետազոտական առումով համեմատաբար շատ է քննարկվել հայաստանյան իրականության մասով՝ շարժման ձևավորումը, ընթացքն ու բնույթը (երևանյան միտինգներ, ցույցեր ու գործադուլներ), կազմակերպչական ու բովանդակային փոխակերպումները (1 և 2-րդ «Ղարաբաղ» կոմիտեներ, ՀՀՇ և այլն), գաղափարախոսական ուղղությունները (ազգային, ժողովրդավարական, բնապահպանական) և այլն:

Միևնույն ժամանակ, ըստ էության, տեսադաշտից դուրս են մնացել կամ էլ համեմատաբար քիչ են քննարկվում շարժման ընթացքն ու փոխակերպումները Լեռնային Ղարաբաղում, որտեղ ծնունդ առավ շարժումը: Մինչդեռ այն ուներ իր առանձնահատկություններն ինչպես միջավայրի, այնպես էլ տարբեր

ճգնաժամերին ու մարտահրավերներին (ադրբեջանական, կրեմլյան) դիմակայելու առումով:

Հայաստանյան իրականության մեջ շարժման առաջամարտիկ դարձավ գիտական ու մշակութային մտավորականության երիտասարդ ներկայացուցիչներից կազմված «Ղարաբաղ» կոմիտեն, որն, ըստ էության, այլընտրանքային ու ընդդիմադիր բնույթ էր տալիս շարժմանը՝ ընդդեմ կուսակցական ու խորհրդային իշխանությունների[48]:

Այլ էր իրավիճակը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում, որտեղ մտավորականությունը քանակական առումով քիչ էր և չուներ համապատասխան ազդեցություն ու կշիռ՝ քաղաքական առաջնորդության համար[49]: 1960-70-ական թթ. ադրբեջանական խորհրդային իշխանությունները ԼՂ-ից արտաքսել էին, հարկադրել հեռանալ կամ էլ տույժերի էին ենթարկել ընդդիմադիր տրամադրված տեղական մտավորականության, իշխանության ներկայացուցիչներին, որոնք Հայաստանի հետ վերամիավորման դիրքերից էին հանդես գալիս՝ ընդդեմ ազգային ու մշակութային խտրականության[50]:

1988 թ. Լեռնային Ղարաբաղում շարժման առաջնորդությունը ստանձնեց հիմնականում տեղական կուսակցական-խորհրդային իշխանության, տնտեսական ակտիվի ներկայացուցիչների ու վարչարարների միջին շերտը[51]: Դա յուրատեսակ լեգիտիմություն էր հաղորդում շարժմանը խորհրդանշական ու կազմակերպական առումով՝ ցույց տալով նաև ժողովրդի ու իշխանության միասնությունը հանրային հարթակում: Պաշտոնական ու իրավական հարթակում դա աներկբա էր. ԼՂԻՄ մարզային ու կուսակցական մարմինների ընդունած՝ Հայաստանի հետ

---

[48] Дерлугьян Георгий, “Адепт Бурдье на Кавказе Эскизы к биографии в миросистемной перспективе”, Издательский дом «Территория будущего», Москва 2010, стр. 296.
[49] Նույն տեղում, էջ 296:
[50] Տե՛ս Վահրամ Բալայան, «Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը», Երևան, 2002, էջ 352:
[51] Дерлугьян Георгий, “Адепт Бурдье на Кавказе Эскизы к биографии в миросистемной перспективе”, Издательский дом «Территория будущего», Москва 2010, стр.297.

միավորման և դրան առնչվող բոլոր որոշումները խորհրդային օրենսդրության շրջանակում էին թե՛ բովանդակային, թե՛ ընթացակարգային առումով: Տեղական ու կուսակցական իշխանության ներկայացուցիչները հրապարակում, ըստ էության, նոր, լրացուցիչ ու հանրային լեգիտիմություն էին ձեռք բերում ազգային հարցի առնչությամբ:

Միևնույն ժամանակ, շարժման ձևավորած հանրային քաղաքացիական մարմիններն ու կազմակերպություններն, ըստ էության, դարձան ազգային ու քաղաքացիական կամարտահայտության, ինքնակազմակերպման ու իշխանության գործառնական միավորներ ԼՂԻՄ-ում:

ՀԽՍՀ ԳԽ՝ 1990 թ. հուլիսի 1-ի նստաշրջանում այդ մասին նշում է Լ. Տեր Պետրոսյանը. *«Ընդ որում, օրինական իշխանություններ ասելով, պետք է հասկանալ ոչ միայն Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի գործադիր մարմինը կամ կուսակցության մարզային կոմիտեն, այլև արցախահայության ստեղծած ոչ պաշտոնական հասարակական կազմակերպությունները՝ «Կռունկ» կոմիտեն, Տնօրենների խորհուրդը, Հայոց համազգային շարժման տեղական ցանցը, «Ամարաս» բարեգործական միությունը և, վերջապես, Ազգային խորհուրդը, որոնք, լրացնելով իրար, դժվարին պայմաններում կարողացան իրականացնել երկրամասի առջև ծառացած գործնական խնդիրների լուծման պատասխանատու գործը»*[52]:

Միևնույն ժամանակ, շարժման ծավալումն Արցախում ուներ իր առանձնահատկությունները՝ դիմակայելու արտաքին մարտահրավերներին, գործելու ճգնաժամային պայմաններում, ադրբեջանական ու կրեմլյան ուժային ճնշման, բռնության ու պատժիչ քաղաքականության պայմաններում: Բնականաբար, այս ամենն իր ազդեցությունն էր թողնում շարժման բնույթի ու

[52] Լևոն Տեր-Պետրոսյան, «Արցախյան ճգանժամ», «Հայք», 1 հուլիսի, 1990:

փոխակերպումների վրա՝ բողոքի ու պահանջատեր շարժումից մինչ ազգային-քաղաքացիական դիմադրություն ու հանրային իշխանություն։

ԼՂԻՄ-ում շարժման առաջին մունետիկ դարձավ «Կռունկ» կոմիտեն: 1988 թ. փետրվարի 13-ին՝ Ստեփանակերտում ցույցի ժամանակ, չստանալով ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար Բորիս Կևորկովի համաձայնությունը՝ միանալու հանրահավաքին ու տալու կոնկրետ պատասխաններ, շարժման ղեկավարներից Արկադի Մանուչարովը առաջարկում է, որ ժողովրդի կողմից առաջադրվեն ակտիվիստներ, որոնք կկառավարեն ցույցերն ու շարժումը[53]:

Բազմությունը մի քանի ցանկ է կազմում, որտեղից կրկնվող անունները հեռացնելով՝ ստեղծվում է 66 հոգուց բաղկացած ցուցակ։ Ընտրվում է կազմկոմիտե, որը տարբեր տվյալներով ունեցել է 11-13 անդամ։ «Կռունկի» նախագահը Արկադի Մանուչարովն էր: Արկադի Մանուչարովը ղարաբաղյան շարժման առաջամարտիկներից էր դեռևս 1960-ական թթ., ինչի պատճառով էլ, ի թիվս այլ գործիչների, հեռացվում է ԼՂԻՄ-ից, հաստատվում Հայաստանում, իսկ 1977թ. կրկին վերադառնում ԼՂԻՄ, դառնում շինարարական նյութերի գործարանի տնօրեն։

Քանդակագործ Արմեն Հակոբյանի առաջարկությամբ կոմիտեն կոչվել է «Կռունկ», որը, բացի խորհրդանշական թռչունի անունից, նաև հապավում էր՝ Լեռնային Ղարաբաղի հեղափոխական կառավարման կոմիտե (Комитет революционного управления Нагорного Карабаха): Կազմակերպչական առումով այն ունեցել է համապատասխան բաժիններ ու հանձնաժողովներ: Դրանք էին հանրահավաքների կազմակերպման բաժինը, կարգախոսների, ֆինանսների, նկարահանումների, տեսաժապավենների, լուսանկարների պահպանման, միգրացիայի և էմիգրացիայի, քաղաքական հարցերի, լրատվության,

[53] Գրիգորյան Համլետ, «Մեկ գիշերվա պատմություն», Ազատ Արցախ, 2020-02-28։

հասարակական կապի պահպանման, անվտանգության բաժինները, քարտուղարությունը[54]։

«Կռունկը»՝ որպես հասարակական-քաղաքական կազմակերպություն, պաշտոնապես գրանցվում է ԼՂԻՄ-ում 1988 մարտի 1-ին։ Դա ցույց է տալիս, որ հենց սկզբից էլ կար պրակտիկա՝ օրինականացնելու ու իրավական հարթության մեջ դնելու հանարային այդ մարմինները՝ որպես հասարակական կազմակերպություններ։

«Կռունկն» ակտիվ ներգրավվում է այդ օրերի գործընթացների մեջ։ 1988 թ. մարտի 1-ին «Կռունկի» կոչով դադարեցվում է գործադուլը, իսկ մարտի 6-ին, ի հիշատակ Սումգայիթի ցեղասպանության զոհերի, հանրահավաք է կազմակերպում Ստեփանակերտի հուշահամալիրում։ «Կռունկն» ունենում է նաև հանդիպումներ ու քննարկումներ Մոսկվայում, օրինակ՝ 1988 թ. մարտի 8-ին Կոմիտեի՝ 7 հոգուց բաղկացած պատվիրակությունը Մոսկվայում հանդիպում է Եգոր Լիգաչովի և Անատոլի Պրիմակովի հետ՝ ներկայացնելով սումգայիթյան ցեղասպանության շարժառիթները և կազմակերպիչներին։

«Կռունկ» կոմիտեի կազմակերպած ցույցի մասնակիցների ճնշմամբ 1988 թ. մարտի 17-ին կայանում է կուսակցության մարզկոմի պլենումը, որոշում է ընդունվում խնդրելու ԽՄԿԿ ԿԿ-ին դրականորեն լուծել ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցը։

Սակայն կազմակերպությունը դառնում է հետապնդումների թիրախ. 1988 թ. մարտի 24-ին Ադրբեջանական Գերագույն խորհրդի որոշմամբ «Կռունկ» կոմիտեն համարվում է օրենքից դուրս, իսկ նրա անդամների դեմ սկսվում են հետապնդումներ։ Ադրբեջանի իշխանությունները մեղադրում են «Կռունկ»-ին

[54] Քոչարյան Ռոբերտ, «Կյանք և ազատություն», Երևան, 2019։

զանգվածային անկարգություն հրահրելու մեջ[55]: Դրա արդյունքում կազմակերպությունն անցնում է ընդհատակ, իսկ 1988 թ. հուլիսի 29-ին տրոհվում է, ստեղծվում են երկու նոր միավորումներ՝ Տնօրենների խորհուրդը և «Միացում» շարժումը:

Կոռունկի ակտիվիստներից շատերը ենթարկվում էին ձերբակալությունների, տեղափոխվում էին Ռոստով քաղաքի բանտ: Նրանց թվում էր նաև «Սովետական Ղարաբաղ» թերթի ռուսական տարբերակի գլխավոր խմբագիր ու ապագայում Արցախի նախագահ Արկադի Ղուկասյանը[56]:

Դեռևս 1988 թ. ադրբեջանական իշխանությունները Կոռունկի նախագահ Արկադի Մանուչարովին փորձում են ձերբակալել, սակայն առաջին փորձը ձախողվում է: Սակայն 1988թ. նոյեմբերի 28-ին նա ձերբակալվում է, տեղափոխվում Աղդամի, հետո Շուշիի բանտ, իսկ այնուհետև փոխադրվում Մոսկվայի «Բուտիրկա» կալանավայրը, որտեղ նա պահվում է 548 օր: Նրա ազատման համար ծավալվում է միջազգային հանրային-իրավապաշտպան շարժում, որտեղ ընդգրկված էին Ա. Սախարովը, Գ. Ստարավոյտովան: Դրա արդյունքում նա ճանաչվում է քաղբանտարկյալ: Գտնվելով «Բուտիրկա» կալանավայրում՝ երկու անգամ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ժողովրդական պատգամավոր է ընտրվել, ինչն աննախադեպ էր համաշխարհային պրակտիկայում: 1990 թ. Եվրախորհրդարանը ընդունում է բանաձև՝ պահանջելով Մանուչարովին ազատ արձակել, իսկ «Ամնեսթի Ինթերնեշնլ» իրավապաշտպան կազմակերպությունը նրան շնորհում է ԽՍՀՄ վերջին քաղբանտարկյալ կոչումը: Ի վերջո, Արկադի Մանուչարովը ազատ է արձակվում 1990 թ. մայիսի 29-ին[57]:

---

[55] Հակոբյան Թաթուլ, «Արցախյան օրագիր. կանաչ ու սև», Երևան-Ստեփանակերտ, Անտարես, 2011, էջ 56–59:

[56] Քոչարյան Ռոբերտ, «Կյանք և ազատություն», Երևան, 2019:

[57] Հակոբյան Թաթուլ, «Արցախյան օրագիր. կանաչ ու սև», Երևան-Ստեփանակերտ, Անտարես, 2011, էջ 56–59:

Կռունկից հետո ԼՂԻՄ-ում շարժման քաղաքացիական կազմակերպական միավորներից դարձավ «ՄԻԱՑՈՒՄ» արցախյան ժողովպական շարժումը, որը՝ որպես հասարակական կազմակերպություն, գրանցեց ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների՝ Ստեփանակերտի քաղաքային խորհրդի գործկոմը 1989-ի հուլիսի 28-ին։

1988 թ. հունիսի 30-ին՝ Ստեփանակերտում անցկացված բազմամարդ հանրահավաքի ընթացքում, հայտարարվում է նոր՝ «Միացում» շարժման ստեղծման մասին։ Շարժման նախագահ է ընտրվում Ռոբերտ Քոչարյանը[58]։

Կազմակերպության՝ Ստեփանակերտի քաղխորհրդի կազմը բաղկացած էր 11 անդամից, նախագահ՝ Ռ. Քոչարյան, անդամներ՝ Ռ. Աղաջանյան, Գ. Աֆանասյան, Հ. Գրիգորյան, Ա. Դանիելյան, Է. Հայրապետյան, Է. Ղուկասյան, Լ. Միրզոյան, Գ. Պետրոսյան, Ա. Պետրոսյան, Ս. Սարգսյան։ Նպատակն էր ԼՂԻՄ ինքնորոշումն ու վերամիավորումը ՀԽՍՀ-ին։ Կազմակերպությունը հանդես էր գալիս հանուն մեկ միասնական համազգային շարժման մեջ բոլորի միավորման, պետականության վերականգնման, Հայոց ցեղասպանության ճանաչման, ԽՍՀՄ-ում ազգամիջյան հարաբերությունների ներդաշնակեցման, իրենց պատմական տարածքներամ բոլոր ազգերի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման, Արցախի տարածքում Հայ առաքելական եկեղեցու գործունեության ազատության, պատմաճարտարապետական հուշարձանների, բնակավայրերի հայկական անունների վերականգնման են համար և այլն։ Այն ուներ իր մամուլը և 1988-ի օգոստոսից լույս էր ընծայում «Միացում» տեղեկագիրը (4 համար)։ Կազմակերպությունը համերաշխ էր ինքնորոշման, ժողովորդավարության և սոցիալական ապարության սկզբունքները հարգող բոլոր շարժումների հետ,

[58] http://president.nkr.am/ru/nkr/expresidents/ :

մերժում էր ազգային խտրականությունն ու ազգայնամոլությունը՝ ցանկացած դրսևորումներով[59]:

Միևնույն ժամանակ, ադրբեջանական ուժային ճնշմանն ու բռնությանը դիմակայելու նպատակով ԼՂԻՄ ում ստեղծվում է համկարգող մարմին, որի կազմի մեջ են մտնում Ռոբերտ Քոչարյանը, Սերժ Սարգսյանը, Սամվել Բաբայանը, Դաշնակցությունից՝ Գեորգի Պետրոսյանը, Ժաննա Գալստյանը ու Վալերի Բալայանը[60]:

Պետք է նկատի ունենալ, որ ԼՂԻՄ-ում արտակարգ դրություն հայտարարելուց հետո շարժման կազմակերպական միավորները անցան ընդհատակ և սկսեցին գործել այդ պայմաններում[61]:

1989 թ. սկսած՝ շարժման հիմնական պահանջներից դարձավ ԼՂԻՄ մարզային իշխանությունների վերականգնումը, քանր որ 1989 թ. հունվարին Հատուկ կառարման կոմիտեի ստեղծմամբ կրեմլյան իշխանությունները վերացրել էին մարզային խորհրդային ու կուսակցական իշխանության մարմինները, և մարզի բնակչությունը զրկվել էլ սեփական իշխանության միջոցով կամարտահայտության իրավունքից, իսկ Հատուկ կառավարման կոմիտեն՝ որպես նշանակովի մարմին, ենթարկվում էր ուղիղ կենտրոնական իշխանություններին:

Մինչդեռ օր օրի սրվող իրավիճակն ու ադրբեջանական կողմի կատարած քայլերը ստիպում էին վերկանգնել կամ ձևավորել սեփական իշխանությունը, քանի որ Կրեմլը չէր շտապում այն անել:

Այս խնդիրը լուծում է շարժումը՝ «ներքևից» ձևավորելով հանրային իշխանության նոր մարմին: 1989-ի օգոստոսի 16-ին՝ Ստեփանակերտում

---

[59] Պետրոսյան Մ., «Միացում», «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ հանրագիտարան»: Հայկական Հանրագիտարան, Երևան, 2004, էջ 489:

[60] Քոչարյան Ռոբերտ, Կյանք և ազատություն», Երևան, 2019:

[61] Виктор Кривопусков, “Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР”, Издание второе, дополненное. — М.: Голос-Пресс, 200, 33-34.

հրավիրված ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարում, ընտրվում է Ազգային խորհուրդ՝ որպես ինքնակառավարման ներկայացուցչական մարմին՝ մարզը ղեկավարելու նպատակով, մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի և կուսակցության մարզկոմի վերականգնումը:

Պետք է նկատի ունենալ, որ այն ոչ թե իշխանությանy զուգահեռ մարմին կամ իշխանության ոչ ֆորմալ մի ձև էր, այլ հենց ԼՂԻՄ իշխանությունը, քանի որ լեգիտիմությունը հիմնված էր արդեն իսկ առկա տեղական խորհ8դային ու կուսակցական իշխանության մարմինների վրա, որոնց ներկայացուցիչներն էլ ձևավորեցին մարզային նոր իշխանությունը՝ ներառելով նաև հանրային շրջանակներ: Միևնույն ժամանակ, այն վերարտադրում է 1918-20 թթ. Արցախի պատմական փորձառությունը[62]:

Ազգային խորհուրդը ունենում է 80 անդամ, ընտրում նախագահություն: Նախագահության նախագահ է դառնում Մարտունու շրջկոմի առաջին քարտուղար, ԽՍՀՄ ժող. պատգամավոր Վաչագան Գրիգորյանը, տեղակալներ՝ Ստեփանակերտի կուսշրջկոմի քարտուղար Վալերի Աթաջանյանը և ժողվերահսկողության մարզային կոմիտեի նախագահ Վլադիմիր Թովմասյանը, անդամներ՝ Ն. Ավագիմյանը, Ռ. Աղաջանյանը, Ս. Բաբայանը, Կ. Բաբուրյանը, Գ. Բաղյանը, Ս. Դավթյանը, Վ. Գաբրիելյանը, Է. Ղուկասյանը, Օ. Եսայանը, Վ. Քոչարյանը, Ռ. Քոչարյանը, Ռ. Մանգասարյանը, Մ. Միրզոյանը, Ա. Մկրտչյանը, Յու. Ներսիսյանը, Ռ. Պետոսյանը, Շ. Պետրոսյանը: Անդամները Մարտակերտի, Հադրութի, Ասկերանի կուսշրջկոմի առաջին քարտուղարներ, Խորհրդային կուսակցական մարմինների, հասարակական կազմակերպությունների, հանրության ներկայացուցիչներ էին:

---

[62] Сурен Золян, “НАГОРНЫЙ КАРАБАХ: ПРОБЛЕМА И КОНФЛИКТ”, Издательство “'Лингва”', 2001, 33-34.

Համագումարում ընդունվել են որոշում, հռչակագիր և դիմումներ՝ ուղղված հատուկ շրջանի պարետին, խորհրդային բանակի և ԽՍՀՄ ՆԳՆ ստորաբաժանումների սպաներին ու զինվորներին, ինչպես նաև ադրբեջանական ժողովրդին:

Ազգային խորհուրդի առաջնահերթ խնդիրներն են դառնում ազգամիջյան ընդհարումների կասեցումը, իրավիճակի կայունացումը, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծումը:

Այս մարմնի գործունեության կարևոր փուլերից պետք է համարել 1989-ի դեկտեմբերի 1-ին Ազգային խորհուրդի և ՀԽՍՀ ԳԽ համատեղ նիստի որոշումը՝ ՀԽՍՀ և ԼՂԻՄ վերամիավորման մասին:

Ազգային խորհուրդը ձևավորվում է մի իրավիճակում, երբ Հատուկ կառավարման կոմիտեի ֆունկցիոնալությունն այլևս արդյունավետ չէր, և իրավիճակը բավական սրված էր, ու երկրամասը հայտնվել էր «անտեր, անտիրական» իրավիճակում:

Ինչպես նշում է Ազգային խորհդի նախագահության նախագահ Վ. Գիրգորյանը. *«Հենց նման իրվավիճակը մեզ ստիպեց խորհդակցել շրջանային, քաղաքային, կուսակցական և խորհդային մարմինների ղեկավարների հետ մի միջոց գտնել՝ մարզին տեր կանգնելու համար: .... Պատմության դասերից ելնելով՝ հրավիրվեց մարզի ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների հավաք համգումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ՝ եղած ձևերի մեջ ամենաընդունելին, որը գործելու է մինչև մարզային խորհրդի ու մարզկոմի լիազորությունների վերականգնումը»*[63]:

[63] Լ. Մկրտչյան, «ԼՂԻՄ. Ազգային խորհուրդ, ազգային հոգս, Հարացազրույց Վ. Գրիոգորյանի հետ, Երեկոյան Երևան, 30.08.1989:

Ըստ Նախագահի՝ այն ժողովրդական խորհուրդ է, որն արտահայտում է ժողովրդի կամքը, որոշումները պարտադիր են մարզի տարածքում ապրող ու գործող բոլոր քաղաքացիների համար:

Կենտրոնական իշխանությունների ստեղծած Հատուկ կառավարման կոմիտեի լիազորությունների ու իրավասությունների շրջանակը ի զորու չեղան կանխելու ԼՂԻՄ-ում անցանկալի զարագացումները, որոնք հերթական լարվածությանը բերեցին 1989 թ.: Մասանավորապես, մարզային խորհրդային ու կուսակցական իշխանության մարմինների լուծարման պայմաններում Ադրբեջանն, օգտագործելով կենտրոնական բյուջեից մարզին տարմադրված միջոցները, արագացված տեմպերով սկսեց դա օգատագործել մարզի ադրբեջանական բնակավայրերում ու շրջաններում՝ կատարելով լայնածավալ կապիտալ ներդրումներ՝ շինարարություն՝ դեմոգրաֆիական պատկերը փոխելու, այդ թվում՝ միջինասիական թուրք մեսխեթցիներին մարզում բնակացնելու նպատակով:

Այդ նույն ժամանակ սկսվում է Հայաստանի ու ԼՂԻՄ տրանսպորտային բլոկադան, մասնավորապես՝ փակվում է Եվլախ-Աղդամ-Ստեփանակերտ երկաթգիծը, և մարզը հայտնվում է տնտեսական ու հումանիտար մեկուսացման մեջ: Այս իրավիճակի արձագանքը 1989թ. մայիսից-օգոստոսը ԼՂԻՄ-ում սկսված մասսայական գործադուլներն էին, որոնց հիմնական պահանջը մարզային կուսակցական ու խորհդային իշխանության մարմինների վերականագնում էր ու Հատուկ կառավարման կոմիտեին կենտորանական իշխանության ներակայացուցչության կարգավիճակ տալը: Ադրբեջանի թիրախում է հայտնվում Շահումյանի շրջանի հայությունը, որի գյությունը սպառնալիքի տակ էր, և ի պատասխան դրա՝ 1989 թ. հուլիսի 26-ին ԼՂԻՄ ժողպատգամավորների արտահերթ նստաշրջանը որոշում ընդունեց՝ շրջանը ԼՂԻՄ-ին միացնելու մասին[64]:

[64] «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ», 1988-1994, Հանրագիտարան, Երևան, 2004:

Արցախի Ազգային խորհդի ձևավորումը՝ որպես ճգնաժամի ժամանակ իշխանության ձևավորում, ընթացավ դրամատիկ պայմաններում՝ պայմանավորված ԼՂԻՄ-ում ստեղծված իրավիճակով։ Ազգային խորհուրդը գործեց մինչև ԼՂՀ անկախության հռչակումը՝ 1991-ի սեպտեմբերի 2-ը։

Գլուխ 4.

Ռազմառստիկանական/սովետաադրբեջանական վարչակարգը Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը 1989թ. հունվարի 12-ի հրամանագրով ԼՂԻՄ-ում ժամանակավորապես մտցրեց կառավարման հատուկ ձև:

Ըստ որոշման՝ ԼՂԻՄ Ժողովրդական պատգամավորների խորհրդի և նրա գործադիր կոմիտեի լիազորություններն այնուհետև դադարեցվում էին մինչև Խորհրդի նոր կազմի ընտրությունների անցկացումը:

Նրա լիազորություններն ամբողջ ծավալով փոխանցվում էին նոր կազմավորված ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեին, որն անմիջականորեն ենթարկվում էր ԽՍՀՄ պետական իշխանության և կառավարման բարձրագույն մարմիններին:

Հատուկ կառավարման կոմիտեի ղեկավարումը ստանձնած Արկադի Վոլսկին առաջարկում էր մեղմել լարվածությունը Ղարաբաղի տնտեսության զարգացման, ԼՂԻՄ և Հայաստանի միջև տնտեսական ու մշակութային ամուր կապերի հաստատման և հայ բնակչության հանդեպ խտրականության կանխարգելման միջոցով:

1989 թ. հունվարի 15-ին «Правда» թերթում հրապարակված «Խաղաղություն Ղարաբաղ երկրին» ծրագրային հոդվածում Ա. Վոլսկին միանգամայն պարզ շարադրում է ղարաբաղյան ճգնաժամը հարուցած պատճառները. *«Հիշենք թեկուզ, թե ինչպես է ծագել ու զարգացել ղարաբաղյան շարժումը: Ինչո՞ւ են մարդիկ Հայաստանի հետ միավորվելու հարց դրել: Որովհետև նրանք տեսնում էին, որ*

Ադրբեջանի նախկին ղեկավարությունն ավելի ու ավելի է մարզը տանում դեպի փակուղի, ձգտում է խզել հայ բնակչության բնական կապերը Հայաստանի հետ մշակույթի, լեզվի ոլորտներում, որոշակի խոչընդոտներ է հարուցում հայախոս մտավորականության համար: Այս ամենն իրականությո՛ւն է: Այս ամենը ճշմարտությո՛ւն է»[65]*:*

ԼՂԻՄ-ում իշխանության օրինականորեն ընտրված մարմիններին փոխարինած և վարչական անսահմանափակ լիազորություններ ստացած Հատուկ կառավարման կոմիտեն, միևնույն ժամանակ, զրկված էր մարզի տնտեսական կյանքը ղեկավարելու որևիցե հնարավորությունից: ԽՍՀՄ կենտրոնական բյուջեից Լեռնային Ղարաբաղին հատկացված միջոցները տնօրինում էր ադրբեջանական ղեկավարությունը, որն էլ լայնամասշտաբ շինարարություն ծավալեց ադրբեջանական բնակավայրերում՝ բնակության ու աշխատանքի վայրեր ստեղծելով ադրբեջանցի վերաբնակիչների համար՝ փոխելու ժողովրդագրական իրավիճակը մարզում: Ապարդյուն էին նաև Հատուկ կառավարման կոմիտեի ջանքերը վերացնելու կամ թեկուզ մեղմելու Լեռնային Ղարաբաղի շրջափակումն Ադրբեջանի կողմից:

Միևնույն ժամանակ, ղարաբաղյան հարցը կապված էր նաև ԽՍՀՄ-ում ընթացող գործընթացների հետ, և իրադարձությունների հետագա զարգացումը պայմանավորված էր նաև ընդհանուր համատեքստով՝ հանրապետությունների կենտրոնախույս նկրտումները, ժողովրդավարական ակտիվությունը և այլն[66]:

Հայաստանում տեղի ունեցող ժողովրդավարական գործընթացները շատ ավելի ուժեղ էին ու արտահայտված. կոմունիստական իշխանությունն ակնհայտորեն կորցնում էր դիրքերը: Նույն վտանգը ծագում է նաև Ադրբեջանում:

---

[65] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, Ереван. Изд. «Лингва», 2001, 66.
[66] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, Ереван. Изд. «Лингва», 2001, с. 81-82.

Կենտրոնը կողմերի միջև մանևրելու քաղաքականությունից, ըստ էության, անցնում է Ղարաբաղի հարցում միանշանակ ու կողմնակալ դիրքորոշման։ Այն է՝ Ղարաբաղն օգտագործել որպես գործոն, որի միջոցով հնարավոր կլիներ արգելափակել Ադրբեջանի կոմունիստական իշխանությանը սպառնացող գործընթացները, և փորձել փոխել իրավիճակը Հայաստանում, որը դուրս էր գալիս վերահսկողությունից։ 1989 թ. վերջերին ու 1990 թ. սկզբներին Ղարաբաղի վերաբերյալ կենտրոնական իշխանությունների ընդունած նոր որոշումները հիմնականում համապատասխանում էին Ադրբեջանի Գերագույն խորհրդի՝ 1988 թ. սեպտեմբերյան նստաշրջանում առաջադրած պահանջներին, այն է՝ լուծարել Հատուկ կառավարման կոմիտեն։ Այդ ժամանակ էլ Ադրբեջանի ԳԽ-ն ընդունեց նաև ինքնիշխանության մասին ակտ՝ իրեն ԽՍՀՄ կազմից դուրս գալու իրավունք վերապահելով, ըստ էության, կապելով իր՝ Կենտրոնին լոյալությունը Ղարաբաղի հետ[67]։

Մինչ այդ՝ 1988 թ. աշնանը, ԼՂԻՄ-ում նկատելի դարձան ռեպրեսիվ կառույցների ուժեղացման նշաններ։ Ամեն ինչ ընթանում էր Ղարաբաղում ռազմառեպրեսիվ իշխանության հաստատման ուղղությամբ,, և շատ շուտով՝ 1989 թ. նոյեմբերի 28-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը որոշում է ԼՂԻՄ-ում կառավարման նոր ձև հաստատել, ինչը նախատեսված չէր գործող օրենսդրությամբ։ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի որոշմամբ ԼՂԻՄ Հատուկ կառավարման կոմիտեն լուծարվեց, և նրա փոխարեն ստեղծվեց Հանրապետական կազմկոմիտե, որը ղեկավարում էր Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ 2-րդ քարտուղար Վիկտոր Պոլյանիչկոն, և այդ կառույցը, ըստ էության, ենթակա էր Բաքվին[68]։

Հետագայում Պոլյանիչկոն հարցազրույցներից մեկում նշում է, որ հստակ ու աներկբա գործել է Ադրբեջանի համար։ Հենց այդ գործի համար է նա նշանակվում

[67] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 80.
[68] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015; С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 90.

Ադրբեջանի ԿԿ երկրորդ քարտուղար և ուղարկվում ԼՂ՝ ունենալով Աֆղանստանում համապատասխան գործունեության փորձառություն[69]։

Հակամարտության կողմերի միջև հավասարակշռության ձախողված քաղաքականությունը փոխարինվում է ԽՍՀՄ ռեժիմի պահպանման տեսանկյունից ամենավտանգավոր թվացող կողմի բացահայտ ճնշման քաղաքականությամբ։ Հակամարտ կողմերի շահերի հավասարակշռության վրա հիմնված լուծումներ առաջարկելու՝ նախկինում ծրագրված, թեև երկչոտ, բայց որոշակի փորձերը փոխարինվեցին կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ Ադրբեջանի նկատմամբ միանշանակ դիրքորոշմամբ, և խնդրի լուծումը դիտվեց կողմերից մեկի՝ ԼՂ՝ որպես քաղաքական գործոնի վերացման մեջ։ Մինչև 1991 թ. ԽՍՀՄ փլուզումը, օգոստոսյան հեղաշրջման ավարտը իրականացվում էր հենց այդ քաղաքականությունը՝ քաղաքական սուբյեկտայնության վերացում, ժողովրդագրական փոփոխություններ՝ մասսայական տեղահանությունների ու բռնագաղթերի միջոցով, պետական ահաբեկչություն ու զանգվածային բռնաճնշումներ, սպանություններ, ձերբակալություններ։

Ինքնին, սակայն, Կազկոմիտեի ստեղծումը երաշխիք չէր կարող լինել ծրագրված քաղաքականության իրականացման համար. անհրաժեշտ էին համապատասխան ուժային լծակներ։ 1990 թ. հունվարի սկզբին ԽՍՀՄ ԳԽ նախագահությունը ԼՂԻՄ-ում և հարակից տարածքներում մտցնում է արտակարգ դրություն՝ չնայած որ այդ պահին հայերի մասսայական ջարդեր տեղի էին ունենում Բաքվում, իսկ ԼՂԻՄ-ում այդ ժամանակ իրավիճակի առանձնահատուկ սրացումներ չկային, ու այստեղ դեռևս 1988 թ. սեպտեմբերից գործում էին հատուկ դրություն, պարետային ժամ, և տեղակայված էին ԽՍՀՄ զորքեր։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 1989 թ. նոյեմբերի 28-ի այդ որոշումը ծայրաստիճան բացասական արձագանք գտավ ինչպես Ղարաբաղում, այնպես էլ

[69] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 90-91.

Հայաստանում: Ի պատասխան՝ ԼՂԻՄ-ում անցկացվեցին բազմահազարանոց ցույցեր, որոնց ընթացքում ընդունվում էին քաղաքացիական անհնազանդության, նշված որոշումը բոյկոտելու, միութենական իշխանությունների հետ համագործակցությունից հրաժարվելու կոչ անող բանաձևեր, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդին ու Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդին ուղղված դիմումներ՝ Հայաստանի ու ԼՂԻՄ վերամիավորման պահանջով: Այս տրամադրություններն արտացոլվեցին 1989 թ. դեկտեմբերի 1-ին՝ Երևանում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ նիստին, ընդունված «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» որոշման մեջ: Իր հերթին, Ադրբեջանն էլ «խմբագրեց» այդ որոշումը՝ իրեն ոչ ձեռնտու կետերի գործունեությունն առկախելով կամ չեղարկելով[70]:

1990 թ. հունվարին ԼՂԻՄ-ում արտակարգ դրության մտցնելը իրականում նպաստում էր Ադրբեջանի իշխանությունների կողմից հայ բնակչության դեմ ռեպրեսիվ միջոցների ձեռնարկմանը և ուղղված էր հայկական կողմի դեմ: Չնայած Կենտրոնի որոշման մեջ նշվում էր, որ ԽՍՀՄ զորքերը ենթարկվելու են կենտրոնական իշխանությունների կողմից ԼՂԻՄ ուղարկված վերստուգիչ-վերահսկիչ մարմնին, սակայն այն այդպես էլ չկազմավորվեց ու չուղարկվեց, իսկ այդ ստորաբաժանումներն օգտագործվում էին Կազմկոմիտեի կողմից պետական ահաբեկչության նպատակով: Իրականում այդ մարմնի իշխանությունը տարածվում էր մարզի ադրբեջանաբնակ վայրերում, իսկ մարզային իշխանություններն ու ԼՂ հասարակությունն այն չընդունեցին ու չճանաչեցին[71]: Մարզի հայկական (Ասկերան, Մարտունի, Մարտակերտ, Հադրութ, Շահումյան) շրջաններում էլ փորձ արվեց բռնությամբ գրավելու իշխանության մարմիններն ու շենքերը, իրականացնելու «դրածո» վարչարարական համակարգի հաստատում:

[70] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 85 -86

[71] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015, 399.

Սակայն տեղական բնակչությունը ոտքի կանգնեց՝ ի պաշտպանություն տեղական իշխանությունների՝ արգելակելու շենք-շինությունների զավթումը. օրինակ՝ Ասկերանում 70 խաղաղ ցուցարարի դեմ ուղարկվում է 220 ավտոմատավոր, տեղի են ունենում ընդհարումներ[72]:

Արգելվում են հանրային միջոցառումները, համերգները և այլն, փակվում են թատրոնները, կինոթատրոնները: Արգելվում է հեռագրահեռախոսային կապը: Խիստ սահմանափակվում է Հայաստանի հետ օդային կապը. մի քանի անգամ պակասեցվում է թռիչքների թիվը: Պարետատունը, բացի անհիմն ձերբակալություններից, տուգանքներ է սահմանում Մոսկվա բողոքի նամակներ, հանրագրեր կամ հեռագրեր ուղարկողների նկատմամբ, անձը՝ 800-1000 ռուբլի[73]:

Հանրապետական կազմկոմիտեի գործունեությունը միտված էր բռնության և ահաբեկչության շարունակական ուժեղացմանը: 1990 թ. մարտից մինչև դեկտեմբեր տեղի են ունենում ռեժիմի խստացում և պատժիչ գործողությունների ընդլայնում, որոնք հատկապես դաժան բնույթ են ստանում՝ ուղեկցվելով քաղաքացիական անձանց սպանություններով:

Հատկանշական է, որ Կազմկոմիտեն իրեն իրավունք է վերապահում իրականացնելու մասսայական տեղահանումներ, «պետական իշխանություններին և վարչակազմերին իրավունք է տրվում ժամանակավորապես վտարելու քաղաքացիներին կյանքի համար վտանգավոր տարածքներից, ինչպես նաև տրամադրելու այլ բնակելի տարածքներ»[74]:

Ըստ էության, Կազմկոմիտեի գործունեությունն ուղղված է եղել ահաբեկչությանն ու կազամակերպված բռնություններին: Առանձնացվում է պետական ահաբեկչության երեք փուլ: Առաջին՝ 1990-ի մարտից դեկտեմբեր, երբ

---

[72] Кривопусков Виктор, "Мятежный Карабах", 2007, 71-77; Тер Саркисянц А., "Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции", Москва, 2015, 413.
[73] Նույն տեղում, 413-417:
[74] С. Золян, "Нагорный Карабах: Проблема и конфликт", 91.

տեղի են ունենում ռեժիմի խստացում և պատժիչ գործողությունների ակտիվացում, որոնք ձեռք բերեցին առանձնակի դաժան բնույթ՝ ուղեկցվելով ոչ միայն ծեծով, այլև խաղաղ բնակիչների սպանություններով: Երկրորդ՝ 1990 թվականի դեկտեմբերից մինչև 1991 թվականի ապրիլը, երբ տեղի են ունենում համատարած տեռոր և բնակչության արտաքսում՝ ստեղծելով կենցաղային անտանելի պայմաններ (անընդհատ ծեծ, ձերբակալություն, անապահովություն, բերքի ոչնչացում, կենսապահովման օբյեկտների վնասում): Երրորդ՝ 1991 թվականի ապրիլից օգոստոս, երբ սկսվեցին ռազմական գործողություններ խաղաղ բնակչության դեմ և նրա տեղահանությունը, որն է «Օղակ» գործողությունը[75]:

Հենց Կազմկոմիտեի գործունեությունն ու «Օղակ» գործողությունը ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխեցին ռազամական դիմակայության փուլ:

Մինչ այդ՝ արդեն իսկ 1990 թվականի մարտին, պաշտպանության նախարար մարշալ Յազովի և ներքին զորքերի հրամանատար գեներալ Շատալինի անմիջական մասնակցությամբ տեղի ունեցավ Գետաշենին հարևան երկու գյուղերի՝ Կամոյի և Ազատի տեղահանությունը[76]:

1990թ. հուլիսի 18-ին Վիկտոր Պոլյանիչկոն հրապարակեց ընդհանուր տեղահանության ծրագիր՝ մշակված Ադրբեջանի Կոմկուսի Կենտկոմի բյուրոյի և Ադրբեջանի ժողովրդական ճակատի ղեկավարության հետ միասին[77]:

Հենց Կազմկոմիտեի ու Պոլյանիչկոյի օրոք Ադրբեջանի ՆԳՆ ՕՄՈՆ զինմիավորումները մուտք գործեցին ԼՂԻՄ, որտեղ արդեն կային ԽՍՀՄ ստորաբաժանումներ: Նրանց վերահսկողության տակ անցավ, օրինակ, Ստեփանակերտի օդանավակայանը, որը տեղակայված էր Խոջալուի մոտ:

[75] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 91-92:
[76] Նույն տեղում, 92.
[77] Նույն տեղում, 92.

Ստեփանակերտի օդանավակայանում ՕՄՈՆ աշխատակիցների կողմից թալանելու, ուղևորներին ծեծի ենթարկելու, թռիչքային անձնակազմի ահաբեկման փաստերը սովորական են դառնում, ինչն արձանագրված է նաև իրավապաշտպան կազմակերպությունների կողմից, մասնավորապես, ըստ Մեմորիալի, ՕՄՈՆ սպաները զինված քաղաքացիական անձանց հետ հարձակումներ են իրականացնում ԼՂԻՄ հայկական գյուղերի վրա: Օրինակ՝ 1991 թվականի հունվարին այրում են ԼՂԻՄ Շուշիի շրջանի Ծաղկաձոր գյուղը[78]:

Այդ օրերին ԼՂԻՄ գործուղված ԽՍՀՄ ՆԳՆ վերլուծական խմբի ղեկավար Վ. Կրիվոպուսկովը, վկայակոչելով իր հանդիպումները Պոլյանիչկոյի հետ, նշում է, որ վերջինս բացահայտ ադրբեջանամետ դիրքորոշում ուներ՝ նպատակ ունենալով կոտրելու ԼՂ հայության կամքը, ձերբակալելու ու դատելու ղարաբաղյան շարժման ակտիվիստներին ու գաղափարախոսներին, խրախուսելու մարզի ադրբեջանակացումը՝ որպես պատիժ հայերի համար: Բնականաբար, վերջինիս այդ գործունեությունը չէր կարող անապատասխան մնալ, ու ԼՂ-ում դա նկատմամբ երեք անգամ մահափորձ էր կատարվել[79]: Ըստ Կրիվոպուսկովի՝ Պոլյանիչկոն չէր էլ թաքցնում, որ ամենայն աջակցություն ունի Կենտրոնում՝ հանձին Մ. Գորբաչովի, իսկ ականատեսների վկայությամբ Ստեփանակերտի աշխատասենյակում հանրային հանդիպումների ժամանակ ցույց էր տալիս պատից կախված հեռագիրը՝ «Կոմունիստական ողջույններով՝ Գորբաչով» մակագրությամբ[80]:

Ըստ Մեմորիալի զեկույցի՝ շրջանի պարետը նշում է, որ ԼՂԻՄ-ում «Պետական իշխանությունը Ադրբեջանի կառավարությունն է, իսկ ԼՂԻՄ Կազմկոմիտեն էլ ներկայացնում է Ադրբեջանի կառավարությունը»[81]:

---

[78] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт, 250-252.
[79] Кривопусков Виктор, “Мятежный Карабах”, 71-77.
[80] Кривопусков Виктор, Мятежный Карабах, 72, С. Золян, Нагорный Карабах: Проблема и конфликт, 91.
[81] С. Золян, Нагорный Карабах: Проблема и конфликт, 251.

Հենց Կազմկոմիտեի գործունեությունն ու «Օղակ» գործողությունը ղարաբաղյան հակամարտությունը տեղափոխեցին ռազմական դիմակայության փուլ:

1991 թ. օգոստոսյան պուտչի ձախողումից հետո Լեռնային Ղարաբաղում նոր իրավիճակ է առաջանում: Հանրապետական կազմկոմիտեն Վ. Պոլյանիչկոյի գլխավորությամբ շտապ լքում է Ստեփանակերտը: Քաղաքի զինվորական պարետությունը գերադասում է չեզոքություն պահպանել: Պետք է նկատի ունենալ, որ օգոստոսյան դեպքերի ժամանակ Ադրբեջանի իշխանություններն աջակցեցին ԳԿԿՊ-ին, իսկ ԼՂԻՄ Կազմկոմիտեի նախագահ, Ադրբեջանի Կոմկուսի ԿԿ 2-րդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն Բաքվի ռադիոյով կիսվում էր ղարաբաղյան փորձով՝ առաջարկելով տարածել այն ԽՍՀՄ-ում:

Առհասարակ, ինչպես նշում է Ս. Զոլյանը, ԼՂԻՄ-ում նման ռազմաքաղաքական ռեպրեսիվ վարչաձևի հաստատումն ու կիրառումը, թերևս, Կենտրոնի կողմից փորձարարություն էին՝ հետագայում ԽՍՀՄ այլ տարածքներում կիրառելու, Կենտորնի համար անցանակալի զարգացումների դեմն առնելու համար[82]:

Անմիջապես վերականգնվում է ԼՂԻՄ Պատգամավորների խորհրդի գործունեությունը, իսկ Ադրբեջանը ԼՂԻՄ-ում զրկվում է ինչպես կառավարման մարմիններից, այնպես էլ պատժիչ գործողությունների մեխանիզմներից, քանի որ առանց Խորհրդային բանակի և ԽՍՀՄ ՆԳՆ Ներքին զորքերի աջակցության Ադրբեջանը ստիպված էր սառեցնելու ՕՄՈՆ և Ադրբեջանի Ազգային ճակատի ռազմական ջոկատների գործողությունները, որոնք ամրանում են բացառապես ադրբեջանաբնակ բնակավայրերում:

[82] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 81-110.

Գլուխ 5.

ԼՂՀ և անկախության հռչակում

ԼՂ շուրջ զարգացումները թելադրված չէին միայն կողմերի գործողություններից ու ակտիվությունից. դրանք կապված էին ԽՍՀՄ-ում տեղի ունեցող գործընթացների հետ: Հենց այդ հանգամանքն էլ վճռորոշ ազդեցություն ունենցավ 1991թ. զարգացումների վրա՝ պայմանավորված օգոստոսյան խռովությամբ, դրա տապալմամբ ու խորհրդային հանրապետությունների անկախության և ինքնիշխանության «շքերթով»:

Մինչ այդ՝ 1991թ. ամռանը, «Օղակ» գործողության պայմաններում, պետական ահաբեկչության ու էթնիկ զտումներ կիրառելով, Մոսկվան և Բաքուն ԼՂ ղեկավարությանը և ժողովրդին առաջարկում են հետ կանգնել Հայաստանի հետ միացման մտադրություններից և մասնակցել Ադրբեջանի՝ 1991 թ. սեպտեմբերին սպասվող նախագահական ընտրություններին: Հայաստանը նույնպես այդ աննախադեպ ուժային ճնշման թիրախում էր:

Թերևս դրանով թելադրված՝ Հայաստանը նույնպես որոշակի մեղմացումների էր գնացել Մոսկվայի հետ հարաբերություններում՝ մասնակցելով կենտրոնի որոշ նախաձեռնությունների՝ Նորօգարևյան պրոցես, տնտեսական համագործակցություն և այլն:

Առհասարակ, ՀՀ այդ ժամանակվա քաղաքական ղեկավարության մեջ կային շրջանակներ, որ կողմ էին հիմնախնդրից «հեռանալուն»՝ կենտրոնանալով ՀՀ անկախության ու ապագա զարգացումների վրա, համարելով, որ Ղարաբաղն արդեն իսկ կորսված է, և պետք է «փրկել» Հայաստանը: Ավելին՝ ինչպես Ս. Զոլյանն է նշում, 1991 թ. Հայաստանը պատրաստ էր ճանաչելու Ադրբեջանի

ինքնիշխանությունը ԼՂ նկատմամբ ԼՂ իշխանության մարմինների վերականգման, անվտանգության երաշխիքների ու ապաշրջափակման դիմաց, սակայն Ադրբեջանը որդեգրել էր ուժային լծակը մինչև վերջ օգտագործելու ու հայերին ամբողջապես դուրս մղելու քաղաքականություն[83]:

1991թ. հուլիսի 19-ին Ստեփանակերտում տեղի է ունենում ԼՂԻՄ մարզխորհրդի նիստ, որի ընթացքում քննարկվում է ԼՂ՝ Ադրբեջանի նախագահական ընտրություններին մասնակցելու առաջարկությունը: Մարզխորհուրդը մերժում է ընտրություններին մասնակցելու կոչը, բայց ընդունում է մյուս առաջարկը՝ մեկնել Բաքու և Մոսկվա, հանդիպել Ադրբեջանի և ԽՍՀՄ ղեկավարության հետ[84]:

Հայաստանի քաղաքական ղեկավարությունը ևս դեմ չէր դրան և նման մոտեցման կրողն էր: Այդ օրերին՝ 1991թ. հուլիսի 15-16-ը, Հայաստանի ԳԽ-ում տեղի ունեցան բուռն քննարկումներ այն հարցի շուրջ, թե պե՞տք է արդյոք ԼՂ պատվիրակությունը մեկնի Բաքու: Հարցը դրվում է քվեարկության, և կողմ են քվեարկում այն առաջարկին, որով ԼՂ մարզային ղեկավարությունը պատրաստակամություն էր հայտնում «քաղաքական բանակցություններ սկսելու Ադրբեջանի իշխանությունների հետ և փոխզիջումային լուծումներ որոնելու Խորհրդային Միության Սահմանադրության և օրենքների շրջանակներում»: Սակայն Ադրբեջանը հայտարարում է, որ ԼՂԻՄ-ը իր անքակտելի մասն է, և Հայաստանի ցանկացած որոշում ԼՂ վերաբերյալ, անկախ բովանդակությունից, իր ներքին գործերին միջամտություն է[85]:

1991թ. հուլիսի 20-ին ԼՂ 6 հոգանոց պատվիրակությունը, որը գլխավորում էր Լեոնարդ Պետրոսյանը, Ստեփանակերտից մեկնում է Բաքու, հանդիպում

[83] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 112-114.
[84] Թաթուլ Հակոբյան, «Արցախյան օրագիր. Կանաչ և սև», Երևան, 2008:
[85] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 116.

ունենում Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովի հետ[86]: Ադրբեջանը համարում էր, որ արդեն իսկ հաղթանակը մոտ է, և հայերը հրաժարվել են միացման գաղափարից:

Սակայն 1991 թ. օգոստոսյան հեղաշրջումը ամբողջովին փոխեց իրադարձությունների հետագա ընթացքը:

1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհուրդն ընդունեց Ադրբեջանի Հանրապետության՝ որպես 1918-1920 թթ. գոյություն ունեցած Ադրբեջանական Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդի պետական անկախության վերականգնման մասին Հռչակագիրը, իսկ հոկտմբերի 18-ին՝ պետական անկախության վերականգման սահմանադրական ակտը: Ադրբեջանի անկախության գործընթացքն ու հռչակումը տեղի ունեցան առանց հանրաքվեի: Միայն 1991 թ. դեկտեմբերի վերջին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, այնտեղ տեղի ունեցավ հանրաքվե, իսկ մինչ այդ՝ արդեն իսկ 1991 թ. դեկտեմբերի 10-ին էր տեղի ունեցել ԼՂՀ անկախության հանրաքվեն:

Իրավիճակի արագ զարգացումները ստիպում էին արագ գործել, և 1991թ. սեպտեմբերի 2-ին, «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքի հիման վրա, ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի բոլոր մակարդակների պատգամավորների համատեղ նստաշրջանը հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (ԼՂՀ): Հռչակագրում, մասնավորապես, նշվում էր, որ այն արտահայտում է «ժողովրդի կամքը, որն ամրագրված է փաստացի անցկացված հանրաքվեում և ԼՂԻՄ ու Շահումյանի շրջանային իշխանության մարմինների՝ 1988-1991 թթ. որոշումներում, նրա ձգտումը՝ դեպի ազատություն, անկախություն, իրավահավասարություն և բարիդրացիություն»: ԼՂՀ հռչակումն ու ձևավորումը մինչ վերջնական կարգավիճակի հստակեցումը նշանակում էր, որ այն շարունակում է մնալ

[86] Թաթուլ Հակոբյան, «Արցախյան օրագիր. Կանաչ և սև», Երևան, 2008:

խորհդային տարածք՝ լինելով ԽՍՀՄ մաս, որտեղ գործում են խորհրդային օրենքները: Այդ մասին նշվում է հռչակագրում, որտեղ ասվում է, որ մինչ ԼՂՀ Սահմանադրության ընդունումը ԼՂՀ տարածքում գործում են ԽՍՀՄ օրենսդրությունը և Սահմանադրությունը:

Հայաստանը կողմ արտահայտվեց ԼՂՀ հռչակմանը՝ ըստ էության, մի կողմ դնելով միավորման հետ կապված նախկին մոտեցումները և «հեռանալով» ԼՂ խնդրից, պատրաստվելով սեպտեմբերի 21 ին հանրաքվեին:

1991 թ. սեպտմբերի կեսերին ՀՀ ԳԽ փակ նիստում քննարկվում է ԼՂՀ միացման խնդիրը, և առաջարկվում է երեք տարբերակ՝ 1. վերացնել 1989 թ. դեկտեմբերի 1-ի որոշումը, 2. հաստատել այն, 3. միաժամանակ ճանաչել ԼՂՀ-ը և Ադրբեջանը՝ առաջարկելով բանակցություններ վարել միմյանց ճանաչման շուրջ:

Կար նաև չորորրդ տարբերակը՝ զերծ մնալ որևէ որոշում կայացնելուց: Դրա օգտին արտահայտվեց Հայաստանի ԳԽ նախագահ Լ. Տեր-Պետրոսյանը՝ հիմնավորելով իրավիճակը պարզաբանելու անհրաժեշտությամբ և ԼՂԻՄ Ելցին-Նազարբաև ծրագրվող առաքելությամբ: Քննարկումը հետաձգելու և հարցը քվեարկության չդնելու նրա առաջարկն էլ որոշիչ է դառնում[87]:

Ընդհանուր առմամբ, ԼՂՀ հռչակումը մտնում էր նաև այդ ժամանակվա ինքնավարութունների «հանրապետականացման» տրամաբանության մեջ, երբ «ինքնավարությունները» որոշումներ էին ընդունում կարգավիճակների ու անվանումների փոփոխության, ինքնիշխանության շուրջ, օրինակ, ՌԴ-ում, և նրանց լոյալության դիմաց Կենտրոնը դա ճանաչում էր[88]:

1991 թ. սեպտեմբերի 20-23-ը ՌԴ և Ղազախստանի նախագահներ Բ. Ելցինն ու Ն. Նազարբաևը այցելում են հակամարտության գոտի՝ Երևան, Բաքու, Գյանջա և Ստեփանակերտ: Դրա արդյունքում ընդունվում է Ժելեզնոդոսկյան կոմյունիկեն, որը

[87] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, 138.
[88] Նույն տեղում, 121.

նախատեսում էր մարզային իշխանությունների լիազորությունների ճանաչում, Ադրբեջանի ու Հայաստանի կողմից ԽՍՀՄ սահմանադրությանը հակասող որոշումների չեղարկում, զինված խմբերի, բացառությամբ ԽՍՀՄ ստորաբաժանումների, դուրսբերում, տեղահանված բնակչության վերադարձ, կումունիկացիաների ու երկաթուղային հաղորդակցության վերականգնում։

Սակայն այն ի սկզբանե դատապարտված էր ձախողման. հաջորդ օրն իսկ՝ սեպտեմբերի 25-ին, Շուշիից հրթիռակոծվում է Ստեփանակերտը։ Հակամարտության ընթացքում առաջին անգամ կիրառվում են հրթիռներ։ Կոմյունիկեի դեմ հանդես եկան Ադրբեջանի Ազգային Ճակատը և Նախիջևանի ղեկավար Հ. Ալիևը։ 1991 թ. նոյեմբերի 5-ից ԼՂԻՄ-ը ու Հայաստանը ենթարկվում են գազային բլոկադայի Ադրբեջանի կողմից։

1991 թ. նոյեմբերի 26-ին Ադրբեջանն ընդունում է «Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի լուծարման մասին» օրենքը, որտեղ 1923 թ. ինքնավարության ստեղծումը բնորոշվում է որպես «ադրբեջանական ժողովրդի ազգային շահերին հակասող գործոն»:

Ադրբեջանի՝ նոյեմբերի 26-ի նշված որոշումը ԽՍՀՄ Սահմանադրական հսկողության կոմիտեմ ճանաչեց որպես ԽՍՀՄ Սահմանադրությանը հակասող:

Համաձայն ԽՍՀՄ Սահմանադրության՝ Լեռնային Ղարաբաղը դասվում էր ինքնավարությունների շարքին, որոնք ԽՍՀՄ սահմանադրական իրավունքը դիտարկում էր որպես ինքնորոշման իրավունքի դրսևորում, և որոնց վերապահվում էր ինքնորոշվելու իրավունք: Քանի որ Լեռնային Ղարաբաղի հայերի ինքնավարությունը ժողովուրդների ինքնորոշման իրավունքի դրսևորում էր, ապա ինչպես նրա լուծարումը, այնպես էլ փոխակերպումը (կարգավիճակի փոփոխությունը) հնարավոր են միայն ժողովրդի կամարտահայտման միջոցով:

Ի պատասխան ԼՂ լուծարման ադրբեջանական որոշման՝ հաջորդ օրն իսկ՝ նոյեմբերի 27-ին, ԼՂՀ-ը որոշում ընդունեց կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու և ԳԽ ընտրություններ կազմակերպելու մասին։

1991 թ. դեկտեմբերի 10-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում տեղի ունեցավ հանրաքվե։ Հետաքրքրական է, որ հանրաքվեի հարցի քննարկման ժամանակ քննարկվել է նաև «Համաձա՞յն եք, որ ԼՂ-ը լինի հանրապետություն ԽՍՀՄ կազմում»[89] ձևակերպումը, սակայն, ի վերջո, որոշվել է տալ այն ձևակերպումը, որը դրվեց հանրաքվեին, քանի որ ԽՍՀՄ փլուզումն օրերի հարց էր։

Քվեաթերթիկում դրված էր հետևյալ հարցը. «Համաձա՞յն եք Դուք, որպեսզի հռչակված Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը լինի անկախ պետություն, ինքնուրույն որոշելով համագործակցության ձևը ուրիշ պետությունների և ընկերակցությունների հետ»։ Ընտրական ձայնի իրավունք ունեցող 132 328 հոգուց քվեարկությանը մասնակցեց 108 736-ը (82,2%), 108 615 մարդ (քվեարկողների 99,89%-ը) «կողմ» քվեարկեց անկախությանը։ Հանրաքվեի անցկացման ընթացքին հետևելու համար ԼՂ էին ժամանել անկախ դիտորդներ, որոնք հանրաքվեի արդյունքների վերաբերյալ իրենց եզրակացությունն ամրագրեցին համապատասխան Ակտում։ Այն ստորագրվել է 23 դիտորդների՝ ԽՍՀՄ, ՌԽՖՍՀ և Մոսխորհրդի ժողովրդական պատգամավորների, խորհրդային ու արտասահմանյան մի խումբ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների ղեկավարների ու ներկայացուցիչների կողմից։

Դեկտեմբերի 10-ը ուներ նաև խորհրդանշական իմաստ. դա Մարդու իրավունքների միջազգային օրն էր։ Ըստ ԼՂՀ ԱԺ նակին նախագահ Աշոտ Ղուլյանի. «Մեր պայքարի հիմքում ընկած էր հենց մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և օրինական շահերի պաշտպանության գաղափարը։ Գլխավոր նպատակը մարդու և, որպես առանձին հանրության,

[89] С. Золян, Нагорный Карабах: Проблема и конфликт, стр, 140

Արցախի ժողովրդի իրավունքների վերականգնման ու պաշտպանության ապահովումն էր, իսկ այդ նպատակի համար դժվար էր մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրվանից ավելի հարմար օր գտնելը»:

Քվեաթերթիկները տպագրված էին երեք լեզուներով՝ հայերեն, ադրբեջաներեն և ռուսերեն, և դրանք խորհրդային կայազորի միջոցով ուղարկվել էին նաև ադբեջանաբնակ բնակավայրեր: Ընտրատարածքներն ու ընտրացուցակներն ընդգրկում էին ողջ ԼՂ տարածքն ու բնակչությունը, և այդ առումով ԼՂՀ ԿԸՀ-ը հանրաքվեի անցկացման համար անհրաժեշտ պայմաններ էր ստեղծել՝ ներառյալ նաև ադրբեջանաբնակ բնկավայրերը[90]:

Հեռագիր էր ուղարկվել Շուշիի շրջանի ղեկավարությանը՝ շրջանի ադրբեջանական բնակչության մասնակցությունը հանրաքվեին կազմակերպելու խնդրանքով[91]:

Սակայն «Բաքվի իշխանությունների դրդմամբ ԼՂՀ-ում ապրող ադրբեջանցիները չմասնակցեցին» հանրաքվեին[92]: Հանրաքվեի մասին ԼՂՀ ԿԸՀ ամփոփիչ ակտում նշվում է, որ ադրեջանցի ընտրողները ժամանակին իրազեկվել են և ստացել են համապատասխան փաստաթղթեր[93]: Ավելին՝ դեկտեմբերի 10-ին՝ հանրաքվեի օրը, ադրբեջանական կողմը տարբեր զինատեսակներից ուժգին հրետակոծեց Ստեփանակերտ քաղաքն ու հարակից բնակավայրերը: Զոհվեց 10 և վիրավորվեց 11 խաղաղ հայ բնակիչ: Այս փաստը տեղ գտավ նաև հանրաքվեին հետևող միջազգային դիտորդների զեկույցում[94]: Այդ մասին հիշում է լրագրող Արմեն Դուլյանը. «Արցախի իշխանությունները քվեաթերթիկները տպել էին երեք

---

[90] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции:, Москва, стр. 438-439; http://www.nkr.am/hy/independence-referendum-in-karabakh .

[91] http://www.nkr.am/hy/independence-referendum-in-karabakh

[92] Աշոտ Ղուլյան, «Հանրաքվեն քաղաքական հասունության դրսևորում էր» https://mediamax.am/am/news/interviews/12542/ ; https://hetq.am/hy/article/101062http ; //www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15220 :

[93] Авакян Ш., “Нагорный Карабах: правовые аспекты”, Ереван, 2014, стр. 23.

[94] Հակոբյան Տ., «ԼՂՀ-ի հռչակումը և պետական շինարարության գործընթացը», Երևան, 2011, էջ 33:

լեզուներով՝ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն, ու խնդրել էին Շուշիում բնակվող ադրբեջանցիներին նույնպես մասնակցել անկախության հանրաքվեին՝ թեկուզ արտահայտելով իրենց բացասական կարծիքը անկախության նկատմամբ: Ինչ արեցին ադրբեջանցիները. ոչ միայն չմասնակցեցին հանրաքվեին, այլև Շուշիից հրետակոծեցին և հրթիռակոծեցին Ստեփանակերտը «Գրադներով» ու «Ալազաններով», ինչի հետևանքով Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաքում և այլ բնակավայրերում զոհվեց 10 ու վիրավորվեց 11 բնակիչ»[95]:

Ամեն դեպքում ԼՂ ադրբեջանցիների չմասնակցությունը հանրաքվեին չէր ազդում դրա լեգիտիմության վրա. նախ՝ ԼՂ-ը իրավաքաղաքական առումով չուներ համայնքային կառուցվածք, երկրորդ՝ բնակչության համամասնությամբ ադրբեջանցի ընտրողների թիվը մոտավորապես 20% էր, այսինքն՝ մասնակցելու և «դեմ» քվեարկելու պարագայում էլ հանրաքվեի արդյունքների վրա այն չէր կարող ազդել[96]:

Առհասարակ, ադրբեջանական իշխանությունները որդեգրել էին ԼՂ որևէ սուբյեկտայնության մերժման ու վերացման քաղաքականություն՝ նախապատվություն տալով ուժային լծակին: Դեռևս ԼՂ Հանրապետության հռչակման հետ կապված 1991 թ. սեպտեմբերի 3-ին որոշում էին ընդունել հակասահմանադրական ճանաչելու ԼՂՀ հռչակումը և հանձարարել ՊԱԿ-ին, ՆԳՆ-ին, Գլխավոր դատախազությանը «վերականագնել» սահմանադրական /ադրբեջանական/ կարգը[97]:

Արդեն իսկ ԼՂՀ հանրաքվեից հետո՝ դեկտեմբերի 17-ին, նախագահ Ա. Մութալիբովը իրեն հայտարարեց ադրբեջանական զինված ուժերի գլխավոր

---

[95] «Հանրաքվեին ադրբեջանցիները Շուշիից կրակեցին Ստեփանակերտի վրա. 29 տարի առաջ Արցախն անկախացավ», https://armeniasputnik.am/20201210/hanraqvein-adrbejancinery-shushiic-kraketsin-stepanakerti-vra-29-tari-araj-artsaxn-ankaxatsav-25704236.html :

[96] А.А. Мелик-Шахназаров, “Выход НКР из Азербайджанской республики В 1991 г., Постсоветские исследования. Т. 1. № 2, 2018, стр. 143.

[97] С. Золян, “Нагорный Карабах: Проблема и конфликт”, стр, 141-142.

հրամանատար՝ ազդարարելով, ըստ էության, բանակի ձևավորումը և դրա գործածումը ԼՂ-ում[98]։

1992 թ. հունվարի 6-ին ԼՂՀ Գերագույն խորհուրդն ընդունեց ԼՂՀ պետական անկախության հռչակագիրը՝ դրանով իսկ օրենսդրորեն ամրագրելով ինչպես հանրաքվեի արդյունքները, այնպես էլ ավելի վաղ ընդունված այն իրավական ակտերը, որոնցով իրականացվում էր Լեռնային Ղարաբաղի ժողովրդի իրավունքը ինքնուրույն որոշելու քաղաքական կարգավիճակը։ 1992 թ. հունվարի 8-ին ԼՂՀ Գերագույն խորհրդի նստաշրջանն ընտրեց Հանրապետության օրենսդիր մարմնի ղեկավարին՝ Արթուր Մկրտչյանին։ Նախարարների խորհրդի նախագահի պաշտոնում հաստատվեց Օլեգ Եսայանը։

[98] Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, стр. 441.

Եզրակացություն

1. 1988-91 թթ. ղարաբաղյան շարժումը թե՛ Հայաստանում, թե՛ ԼՂ-ում հասարակական ու կազմակերպական փոխակերպումների բարդ ու դինամիկ ընթացք է ունեցել՝ լինելով քաղաքացիական, հանրային-քաղաքական ինքնակազմակերպման միջոց ու մեխանիզմ, ձևավորվելով ու գործառնելով սահմանադրականության շրջանակում, հետամուտ լինելով ԼՂ ինքնորոշման իրավունքի իրացմանը՝ որպես ազգային ու մարդու իրավունքների պաշտպանության խնդրի:

   Շարժման քաղաքացիական ու քաղաքական ինքնակազմակերպման մեխանիզմներն ու հանրային ներգրավածությունն ապահովեցին ու ձևավորեցին պետականությունը ՀՀ-ում և ԼՂ-ում: Ընդ որում, նույնիսկ խորհրդային և ադրբեջանական ռեպրեսիվ ապարատի ու բիրտ քաղաքականության պայմաններում շարժման ձևավորած հանրային քաղաքացիական մարմիններն ու կազմակերպությունները, ըստ էության, դարձան ազգային ու քաղաքացիական կամարտահայտության, ինքնակազմակերպման ու իշխանության գործառնական միավորներ ԼՂԻՄ-ում՝ ապահովելով ԼՂ սուբյեկտայնությունը ճգանժամային իրավիճակներում:
2. 1988-91 թթ. ղարաբաղյան հակամարտության զարգացումների մեջ առանցքային նշանակություն ունեցան միութենական, հանրապետական, մարզային մակարդակներում տարբեր մարմինների ընդունված որոշումները, որոնց ընդունման, իրականացման գործընթացները սերտորեն կապված էին հակամարտության դինամիկայի հետ և, ըստ էության, տեղի էին ունենեւում մյուս գործընթացներին՝ մասսայական շարժումներին, բռնություններին, գործադուլներին և այլնին զուգահեռ: Մի կողմից՝ դրանք իրենք էին հարուցում հակամարտության ու գործընթացների նոր ընթացք, նոր բովանդակություն

հաղորդում խնդրին, մյուս կողմից էլ ուղղակիորեն ազդվում էին արդեն իսկ ընթացիկ իրողություններից: Զարգացումների այդ ընթացքը բնութագրական է շարժման սկզբնավորման պահից ևեթ:

3. Բռնության սկզբնավորումը ղարաբաղյան կոնֆլիկտի ժամանակ ունեցել է զարգացման իր դինամիկան՝ մասսայական պոգրոմներից մինչև զինված հակամարտություն ու պատերազմ: Բռնության սկիզբը 1988թ. հայերի՝ Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում տեղի ունեցած մասսայական ջարդերն էին, որոնք կոլեկտիվ բռնության առաջին դեպքն էին ԽՍՀՄ-ում: Սումգայիթը «էթնիկացրեց» կոնֆլիտը, որը մինչ այդ իրավաքաղաքական հարթության մեջ էր միայն: Սումգայիթյան իրադարձությունների շուրջ դիսկուրսն ու հետագա ընթացքը ծնում են նոր բռնություններ 1988 աշնանը և փախստականության մասսայական հոսքեր:
4. 1988-91 թթ. ԼՂԻՄ-ում խորհդային կենտրոնական իշխանությունները «փորձարկել» են հակամարտության կարգավորման մի քանի մոդելներ՝ սոցիալ-տնտեսական ու ֆինանսական «ներակումներ», հատուկ կոմիտե, քաղաքական ենթակայություն՝ Մոսկվային, տարածքային՝ Ադրբեջանին, ԼՂ իշխանության և ինքնակառավարման լուծարում՝ Ադրբեջանին բռանկցման նպատակով և ռազմառստիկանական վարչակարգով, բոլորն էլ՝ անհաջող, ինչը և դուռ բացեց հակամարտության լայնամասշտաբ ընթացքի համար: Ընդ որում, խորհրդային զորքերի, քաղաքական ու ուժային լծակների առկայությունը հակամարտության գոտում որևէ կանխարգելիչ դեր չկատարեց հետագա սրացումներից խուսափելու համար: Ավելին՝ դա որոշ դեպքերում օգագործվում էր նաև՝ ըստ քաղաքական հայեցողության՝ որպես ուժային լծակ կողմերից մեկի, տվյալ դեպքում՝ ԼՂ դեմ:
5. 1988-91 թթ. ԼՂ հարցի նկատմամբ կենտրոնական իշխանությունների վարած քաղաքականության հետևանքով արդեն իսկ հակամարտության մեջ նոր հիմնախնդիրներն էին մտել, այն է՝ բռնության հաղթահարումը և ԼՂԻՄ

սուբյեկտայնության վերականգնումը, քանի որ 1989 թ. Հատուկ կառավարման կոմիտեի ստեղծումով լուծարվել էին ԼՂԻՄ մարզային կենտրոնական իշխանությունները:

Բայցևայնպես, ԼՂ խնդիրը «մեկուսացված» հարց չէր արդեն ու սերտորեն կապված էր նախկին ԽՍՀՄ տարածքում տեղի ունեցող գործընթացների հետ: Այդ տրամաբանության ներքո և 1991 թ. հանրապետությունների ինքիշխանությունների ու անկախությունների «շքերթի» պայմաններում տեղի է ունենում ԼՂՀ հռչակումը 1991 թ. սեպտեմբերի 2-ին, քանի որ Ադրբեջանն արդեն իսկ հռչակել էր իր անկախությունը 1991 թ. օգոստոի 30ին: Արդեն 1991 թ. դեկտեմբերի 10-ին տեղի է ունենում ԼՂՀ անկախության հանրաքվեն: Ընդ որում, ժողովրդավարական գործընթացների առումով ԼՂ-ը արդեն իսկ այդ ժամանակ առաջավոր էր Ադրբեջանից, որն իր անկախությունը հռչակեց առանց հանրաքվեի, և միայն 1991 թ. դեկտեմբերի 29-ին արդեն իսկ ԽՍՀՄ լուծարումից ու ԼՂՀ անկախության հանրաքվեից (1991 թ. դեկտեմբերի 10) հետո Ադրբեջանում տեղի ունեցավ հանրաքվե:

Օգտագործված գրականության ցանկ

Հայերեն

1. Սովետական Ղարաբաղ, 21, II, 1988:
2. Բաբայան Ս., «Հատուկ կառավարման կոմիտե. առաջին քայլերը», Ազատ Արցախ, 12 հոկտեմբերի, 2018:
3. «Պրիմակովը Լեռնային Ղարաբաղի մասին. մաս I», https://mediamax.am/am/news/special-file/22003/ :
4. Աբրահամյան Հ., «ԼՂԻՄ հատուկ կառավարման կոմիտեի ձախողումը», Մեսրոպ Մաշտոց համալսարանի լրատու, 2016:
5. Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի Որոշումը Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին, Երեկոյան Երևան. 4 դեկտեմբերի, 1989:
6. Թ. Հակոբյան, «Կանաչ ու սև. արցախյան օրագիր», Երևան-Ստեփանակերտ, 2008:
7. Վ.Կրիվապուսկով, «Խռովահույզ Ղարաբաղ», Երևան, 2008:
8. Հ. Մարության, «Հայ ինքնության պատկերագրությունը. ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը», հատոր Ա, Երևան, 2009:
9. Վահրամ Բալայան, «Արցախի պատմությունը հնադարից մինչև մեր օրերը», Երևան, 2002:
10. Լևոն Տեր-Պետրոսյան, «Արցախյան ճգանժամ», «Հայք», 1 հուլիսի, 1990:
11. Գրիգորյան Համլետ, «Մեկ գիշերվա պատմություն», Ազատ Արցախ, 2020-02-28:
12. Քոչարյան Ռոբերտ, «Կյանք և ազատություն», Երևան, 2019:Հակոբյան Թաթուլ, «Արցախյան օրագիր. կանաչ ու սև», Երևան-Ստեփանակերտ, Անտարես, 2011, էջ 56–59:

13. Պետրոսյան Մ., «Միացում», «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ հանրագիտարան»: Հայկական Հանրագիտարան, Երևան, 2004:
14. Լ. Մկրտչյան, «ԼՂԻՄ. Ազգային խորհուրդ, ազգային հոգս, Հարացազրույց Վ. Գրիգորյանի հետ, Երեկոյան Երևան, 30.08.1989:
15. «Ղարաբաղյան ազատագրական պատերազմ», 1988-1994, Հանրագիտարան, Երևան, 2004:
16. Աշոտ Ղուլյան, «Հանրաքվեն քաղաքական հասունության դրսևորում էր», https://mediamax.am/am/news/interviews/12542/ :
17. Հակոբյան Տ., «ԼՂՀ-ի հռչակումը և պետական շինարարության գործընթացը», Երևան, 2011:
18. «Հանրաքվեին ադրբեջանցիները Շուշիից կրակեցին Ստեփանակերտի վրա. 29 տարի առաջ Արցախն անկախացավ», https://armeniasputnik.am/20201210/hanraqvein-adrbejancinery-shushiic-kraketsin-stepanakerti-vra-29-tari-araj-artsaxn-ankaxatsav-25704236.html :
19. http://president.nkr.am/ru/nkr/expresidents/ :
20. http://www.nkr.am/hy/independence-referendum-in-karabakh :
21. https://hetq.am/hy/article/101062http :
22. http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=15220 :

Անգլերեն

23. L. Abrahamian, “Armenian Identity in a Changing World”, Costa Mesa, California, 2006.
24. Abrahamian, L., “Typology of Aggressiveness and National Violence in the Former USSR”, International Journal on Minority and Group Rights, Vol. 4, No. 3/4, Special Issue on Ethnicity and Conflict in Europe and Beyond (1996/97).
25. International Journal on Minority and Group Rights, Vol. 4, No. ¾.

Ռուսերեն

26. Тер Саркисянц А., “Армяне Нагорного Карабаха. История. Культура. Традиции”, Москва, 2015.
27. Золян С., “Нагорный Карабах, проблема и конфликт”, Ереван, 2001.
28. В. Тишков, “Теория и практика насилия //Антропология насилия”, СПб, 2001.
29. Ал. Василевский, “Туча в горах”, Аврора, 1988, Н 10.
30. “Нагорный Карабах и вокруг него глазами независимых наблюдателей”, сост. С. Золян, Г. Мирзоян, Ер, 1991.
31. Р. Агаев, З. Ализаде. “Азербайджан: конец второй республики (1988-1993)”, Москва, 2006.
32. Н. Гиренко, “Морфология идеология и стратегия насилия //Антропология насилия”, СПб.
33. Т. Де Ваал, “Черный сад. Армения и Азербайджан между миром и войной”
34. “Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев”, сост. С. Шахмурадян, Ер, 1989.
35. “Сумгаит…Геноцид…Гласность?”, сост. Г. Улубабян, С. Золян, А. Аршакян, Ер, 1989.
36. О. Кулиш, Д. Мелков, “Черными семенами не прорасти //Социалистическая индустрия”, 27 марта, 1998.
37. “Настал ли час расплаты?”, Коммунист, 30 октября, 1988.
38. Буниятов З., “Почему Сумгаит?”, Элм, май 13 и 19, 1989.
39. “Азербайджанская аргументация и ее опровержение”, Ереван, 1989.
40. Рамиз Мехтиев, “Горис-2010: сезон театра абсурда”, http://ru.trend.az/regions/scaucasus/azerbaijan/1773914.html .
41. К. Михайлов, “Нам вместе жить”, Собеседним ИЗ, 1989.

42. “Теперь я знаю, что чувствовали евреи Германии в 1939 году”, Бакинский дневник, (KRUG) еженедельник, 23.07.1989.
43. Дерлугьян Георгий, “Адепт Бурдье на Кавказе Эскизы к биографии в миросистемной перспективе”, Издательский дом «Территория будущего», Москва 2010.
44. Виктор Кривопусков, “Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР”, Издание второе, дополненное. — М.: Голос-Пресс, 200.
45. Кривопусков Виктор, “Мятежный Карабах”, 2007.
46. Авакян Ш., “Нагорный Карабах: правовые аспекты”, Ереван, 2014.
47. А.А. Мелик-Шахназаров, “Выход НКР из Азербайджанской республики В 1991 г., Постсоветские исследования. Т. 1. № 2, 2018.

Արսեն Հակոբյանը պատմական գիտությունների թեկնածու է, Երևանի պետական համալսարանի դասախոս, դոցենտ: Աշխատում է նաև Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող: Մի շարք գիտական հոդվածների և աշխատանքների հեղինակ է: